

**ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՀԱՏՎՈՂՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ**

Բանկային գործունեության կարգավորումը և վերահսկողությունը միասնական ամբողջական համակարգ է, որը նպատակաուղղված է այդ համակարգի կայունության, հուսալիության և բնականոն գործունեության ապահովմանը, բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերի բացահայտմանը, դրանց կանխարգելմանը:

**Բանկային գործունեության կարգավորման** առաջին փորձը հայտնի է դեռևս վաղ միջնադարից, երբ բանկային գործունեության աշխուժացման պայմաններում տվյալ երկրի իշխանությունները կիրառում էին կարգավորման այս կամ այն գործիքները: Սակայն նշված փուլում կարգավորման առարկա էր հանդիսանում միայն առանձին հաստատությունների գործունեությունը: Բանկային համակարգի կարգավորման խնդիրը առաջ եկավ կենտրոնական բանկերի կողմից վերջին ատյանի վարկատուի գործառույթը ստանձնելու հետ միայն: **Ժամանակակից պայմաններում բանկային գործունեության կարգավորումն իրականացվում է ըստ հետևյալ սկզբունքների՝**

- **ինստիտուցիոնալ**, երբ միանման բոլոր հաստատությունները վերահսկվում և կարգավորվում են մեկ մարմնի կողմից,
- **ֆունկցիոնալ**, երբ կարգավորվում են կոնկրետ գործառույթները, իրենց բնորոշ ռիսկերից ելնելով, անկախ գործարքը կատարող հաստատության տեսակից,
- **միասնական**, երբ բոլոր հաստատությունները վերահսկվում և կարգավորվում են մեկ միասնական մարմնի կողմից:

Մինչև 1990-ական թթ. կեսերը աշխարհի գրեթե բոլոր երկրներում ֆինանսական հաստատությունների կարգավորումը և վերահսկողությունը հիմնված էր ինստիտուցիոնալության սկզբունքի վրա: Սակայն վերջին տասնամյակի ընթացքում բազմաթիվ երկրներ, այդ թվում՝ ՀՀ-ը, ընտրել են միասնական վերահսկողության հայեցակարգն, այսինքն՝ ամբողջ ֆինանսական շուկայի կարգավորումը և վերահսկողությունը միավորել են մեկ մարմնում:

ՀՀ-ում ֆինանսական համակարգի կարգավորումը և վերահսկողությունը նույնպես իրականացվում է մեկ միասնական մարմնի կողմից: 2006թ. հունվարի 1-ից ՀՀ ֆինանսական համակարգի բոլոր մասնակիցների՝ ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ անձանց, արժեթղթերի շուկայի մասնակիցների, ներդրումային ընկերությունների, ներդրումային հիմնադրամների, կուտակային կենսաթոշակային ապահովագրություն իրականացնող կազմակերպությունների, ապահովագրական գործունեություն իրականացնողների նկատմամբ կարգավորումը և վերահսկողությունն իրականացվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

Օրենքով սահմանված կարգով ԿԲ-ը լիցենզավորում է բանկերին, սահմանում բանկային գործունեության կարգավորման տնտեսական նորմատիվները, այլ սահմանափակումները, իրականացնում է բանկի գործունեության վերահսկողությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կիրառում պատժամիջոցներ: Միևնույն ժամանակ վերահսկողությունը և կարգավորումը չեն սահմանափակվում պետական լիազորված մարմնի գործառույթներով, դրանք զուգահեռաբար իրագործվում են բանկի բաժնետերերի, տնօրինության, անկախ աուդիտորների կողմից: Ներկայումս բազմաթիվ բանկերում կիրառվում են կարգավորման հատուկ ներքին կարգեր՝ ներքին տնտեսական նորմատիվների ավելի խստացված համակարգ, վերահսկողության տարաբնույթ մեթոդներ, որոնք հանգում են միևնույն նպատակին՝ բանկի կայուն և հուսալի գործունեության ապահովմանը:

Կարգավորող նորմերը հանդիսանում են բանկային ռիսկերի կառավարման պարտադիր ցուցիչներ, իսկ վերահսկողությունը գործնականում ավելի ընդգրկուն է. հետևում է կարգավորող նորմերի և գործարարության ձևավորված ավանդույթների պահպանմանը ու ներառում է բանկային ռիսկերի կառավարման խնդիրները: **Վերահսկողության առաջնային խնդիրը օրենսդրորեն սահմանված կարգավորման նորմերի պահպանմանը հետևելն է:**

Բանկային վերահսկողությունը զարգացել է 20-րդ դարի երկրորդ կեսին և ներկայումս այն որակապես նոր փուլ է մտնում, որտեղ **շեշտը դրվում է ռիսկերի կառավարման հետ կապված խնդիրների լուծման վրա:** Սակայն, շատ դեպքերում, բանկային վերահսկողությունը զարգանում էր «փորձերի և սխալների» ճանապարհով, քանզի ինքնին ֆինանսական հարաբերությունները ստեղծում են չափազանց

դինամիկ, արագ փոփոխվող և զգայուն համակարգ: Իսկ ֆինանսական ռիսկերը ներառում են մարդկության կենսագործունեության ընթացքում առաջացող բոլոր հիմնական ռիսկերը:

**Ժամանակակից պայմաններում բանկային կարգավորման առավել յուրահատուկ տարրը կանխարգելիչ կարգավորումն է: Կանխարգելիչ կարգավորումը ֆինանսական հաստատությունների նկատմամբ կիրառվող միջոցառումների ամբողջությունն է, որը կոչված է կանխարգելելու տվյալ հաստատության գործունեության հետագայում առաջանալիք ռիսկերը:** Այդ իսկ նպատակով ազգային օրենսդրությունները սահմանում են կանխարգելիչ նորմեր՝ կանոնների և չափորոշիչների տեսքով պարտադիր պահանջներ, որոնք կանոնակարգում են այդ հաստատությունների վարքը: Դրանք ընդգրկում են կապիտալի, իրացվելիության ու վճարունակության պահանջները, ռիսկերի կառավարման համակարգը, որոշ հաշվեկշռային սահմանափակումներ և այլն ու հիմնականում միտված են բանկերի բնականոն, շահութաբեր և հուսալի գործունեության շարունակականությունն ապահովելուն:

## **ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀԱՏՎՈՂՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

**Բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության (ԲԳԿՎ) հիմնական նպատակներն են՝**

- բանկային համակարգի կայունության և հուսալիության ապահովումն է,
- ավանդատուների և պարտատերերի շահերի պաշտպանությունը,
- համակարգային ռիսկերի սահմանափակումը:

**Բանկի կայուն և հուսալի գործունեության հիմնական չափորոշիչներից են իրացվելիությունը և վճարունակությունը:**

**Վերահսկող մարմինները** տարբեր պետություններում լինում են հետևյալ երեք տեսակներից մեկը՝

- ԿԲ կամ ազգային բանկ,
- Ֆինանսների նախարարություն,
- Անկախ գերատեսչություն:

**Բանկային վերահսկողությունը արդյունավետ չէ, երբ.**

- բացակայում է օրենսդրական դաշտի համակարգվածությունը,
- չեն կիրառվում վերահսկողության ժամանակակից եղանակները,
- վերահսկողության արդյունքները չեն հանգեցնում բանկի վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումներին:

Բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության ոլորտում միջազգային ճանաչված և հեղինակավոր կազմակերպությունը **Բազելյան կոմիտեն է:** Վերջինս սահմանել է **արդյունավետ վերահսկողության հիմնական սկզբունքները**, որոնք հիմնվում են հետևյալ դրույթների վրա՝

- ✓ *կայուն բանկային համակարգի պահպանումը, ավանդատուների և պարտատերերի կորուստների ռիսկերի նվազեցումը*
- ✓ *բավարար միջոցների, կապիտալի համարժեք մեծության առկայությունը,*
- ✓ *շուկայական կարգապահությունը, այդ թվում՝ գործունեության թափանցելիության ապահովումը,*
- ✓ *վերահսկող մարմինների ինքնուրույնությունը,*
- ✓ *այլ երկրների վերահսկողական մարմինների հետ սերտ համագործակցությունը,*
- ✓ *ռիսկերի համարժեք կառավարումը:*

Բազելյան կոմիտեն օժտված չէ բանկային վերահսկողության միջպետական լիազորություններով: Մշակելով իր առաջարկություններն ու չափորոշիչները (սկզբունքները), որոնք հիմք են հանդիսանում բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության համար, Կոմիտեն առաջնորդվում է անդամ և ոչ անդամ երկրներում հուսալի բանկային վերահսկողական համակարգ ունենալու մղումով: Բազելյան կոմիտեն անընդմեջ ընդլայնում և կատարելագործում է բանկային կարգավորման և վերահսկման չափորոշիչները, քանզի զարգանում, նոր որակ է ձեռք բերում բանկային բիզնեսը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումների, միջազգայնացման միտումների առումով, ինչպես նաև բանկերի միջոցով ստվերային փողերը լվանալու փորձերը կանխելու նպատակով: Այդ ամենը փոխում է ֆինանսական ռիսկերի բնույթը, առաջացնում ռիսկերի նոր տարատեսակներ, որոնք պահանջում են դրանց նույնականացում, կանոնակարգում և համարժեք կանխարգելիչ միջոցների ձեռնարկում:

Բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով և տրված լիցենզիայի հիման վրա իրականացնել բանկային գործունեություն:

Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջակությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից ու ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու և (կամ) ներդրումներ կատարելու միջոցով:

Ժամանակակից աշխարհում բանկային գործունեությունը համարվում է լիցենզավորման համար ենթակա գործունեության հատուկ տեսակ: Առևտրային բանկերը գործում են կարգավորման և վերահսկողության խիստ դաշտում: Բանկի գործունեությունը կարգավորվում է անուղղակի տնտեսական մեթոդներով (ԿԲ նորմատիվներ, օրենքներ և այլն):

**Լիցենզավորման հատուկ ընթացակարգի գործողության անհրաժեշտությունը** պայմանավորված է բանկային գործառնություններում առկա ռիսկերով և վճարունակ պահանջարկի մակրոակտիվ վրա ազդեցությամբ:

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի ԿԲ-ի խորհրդի իրավասությունների վերաբերյալ դրույթներով՝ ՀՀ ԿԲ-ի խորհուրդը հաստատում է «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը» **կանոնակարգ 1-ը**:

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ **բանկային գործունեության լիցենզիան Կենտրոնական բանկի կողմից տրվող բանկային գործունեություն իրականացնելու թույլտվությունը հավաստող փաստաթուղթ է: Բանկային գործունեության լիցենզիա տալու բացառիկ իրավունքը պատկանում է Կենտրոնական բանկին:**

Բանկային գործունեության լիցենզիան անժամկետ է, և դրանում նախատեսված իրավունքները չեն կարող փոխանցվել կամ այլ կերպ օտարվել: Բանկային գործունեության լիցենզիայի միասնական ձևը սահմանվում է ԿԲ-ի կողմից:

Բանկային գործունեության լիցենզիան կարող է անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվել ԿԲ-ի որոշմամբ, օրենքով նախատեսված դեպքերում:

*Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի լուծարման դեպքում բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցնում է և պետք է վերադարձվի ԿԲ:* Բանկային գործունեության լիցենզիայի կորստի դեպքում բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղն այդ մասին անհապաղ հայտնում է ԿԲ-ին: Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի դիմումով ԿԲ-ը մեկամսյա ժամկետում վերականգնում է նրա բանկային գործունեության լիցենզիան:

Բանկային գործունեության լիցենզիան դասվում է բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների շարքին: Բանկային գործունեության լիցենզավորման յուրաքանչյուր փուլի տևողությունը սահմանված է մինչև մեկ ամիս: Բանկերը ենթակա են պետական գրանցման կենտրոնական բանկի կողմից, դրանք կարող են իրականացնել բանկային գործունեություն՝ վերջինիս կողմից լիցենզավորվելու պահից:

## ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Լիցենզավորման ընթացակարգը սկսվում է *լիցենզիայի նախնական հավանություն ստանալու միջնորդագիր ներկայացնելու պահից և ավարտվում է լիցենզիա տալու կամ լիցենզիա ստանալու դիմումը մերժելու պահով:*

Լիցենզավորման ընթացակարգի փուլերն են՝

- լիցենզիա ստանալու նախնական հավանությունը,
- բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցումը,
- լիցենզիայի տրամադրումը:

**Լիցենզիա ստանալու նախնական հավանությունը** - Լիցենզավորման եռափուլ ընթացակարգում առանձնապես կարևորվում է լիցենզիա ստանալու նախնական հավանության համար նախաձեռնող անձանց կողմից կենտրոնական բանկ ներկայացված միջնորդագրի և դրան կից փաստաթղթերի

քննարկման փուլը: *Լիցենզիա ստանալու նախնական հավանության համար* ԿԲ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

- նախաձեռնող անձանց կամ օտարերկրյա բանկի *միջնորդագիրը*,
- ստեղծվող *բանկի կանոնադրության նախագիծը*, իսկ օտարերկրյա բանկի մասնաճյուղի համար օտարերկրյա բանկի հիմնադիր փաստաթղթերը և մասնաճյուղի կանոնադրության նախագիծը,
- *բանկի մասնակիցների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը*,
- ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության *տնտեսական ծրագիրը և այլ փաստաթղթեր, սահմանված օրենքով ու Կանոնակարգով*:

**Լիցենզիա ստանալու նախնական հավանության միջնորդագիրն** իրենից ներկայացնում է նախաձեռնող անձանց պաշտոնական դիմումը ԿԲ-ին, որով նրանք վերջինիս տեղյակ են պահում բանկ ստեղծելու մասին և հավաստիացնում, որ մանրակրկիտ դիտարկել են միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը (արժանահավատ է ու ամբողջական), և գիտակցում են, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

**Բանկի կանոնադրությունը** նրա հիմնադիրների կողմից հաստատված հիմնադիր փաստաթուղթ է, որի հիման վրա լիցենզավորող մարմինը պատկերացում է կազմում նոր ստեղծվող բանկի իրավական վիճակի, գտնվելու վայրի, մեկնարկային կապիտալի, կառավարման մարմինների կառուցվածքի և իրավասությունների, բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների ցանկի, տարածքային ստորաբաժանումների ստեղծման և գործունեության դադարման վերաբերյալ:

Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության **տնտեսական ծրագիրը** կոնկրետ հաշվարկներով, վերլուծություններով և ելակետային տվյալներով հիմնավորված, *բանկի գործունեության առաջիկա երեք տարիների համար* կազմված ու տնտեսական գործունեությունը հիմնավորող փաստաթուղթ է: Տնտեսական ծրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ ընդհանուր դրույթներ, բանկի ներքին կազմակերպական կառուցվածքը, եկամուտների և ծախսերի հաշվարկը, ֆինանսական հեռանկարային զարգացման միտումները, ներդրումների համար կանխատեսվող շուկաների նկարագրությունը, միջոցների ներգրավման հիմնական գործիքները, մրցակցությանը դիմակայելու մեթոդները, բանկի կառավարման սկզբունքները և հնարավոր ռիսկերի գնահատումը:

Այս փուլի հիմնական նպատակն է մանրամասն քննարկել նախաձեռնող անձանց կողմից ներկայացված փաստաթղթերը, պարզել, թե ովքեր են լինելու ապագա բանկի ղեկավարները, մասնակիցները, որքանով է իրատեսական գործունեության տնտեսական ծրագիրը:

Նախատեսված փաստաթղթերը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով և կարգով *ներկայացնելու օրվանից մեկամսյա ժամկետում* ԿԲ-ը քննում է միջնորդագիրը:

Կենտրոնական բանկը կարող է մերժել միջնորդագիրը, եթե ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեությունը հակասում է օրենքներին, բանկի գործունեության տնտեսական ծրագիրը չի համապատասխանում ԿԲ-ի կողմից հաստատած ձևին, կամ այն անիրատեսական է: Միջնորդագիրը կարող է մերժվել նաև, եթե բանկն ի վիճակի չի լինի բնականոն բանկային գործունեություն իրականացնել, քանի որ բանկը չունի արհեստավարժ գործադիր մարմին, առկա են ներդրումների ծագման ոչ օրինական լինելը հաստատող ապացույցներ, ծրագրում առկա է ներկայացված տվյալների անհամապատասխանություն և այլն:

Կենտրոնական բանկի կողմից *մեկամսյա ժամկետում դիմումը չմերժելու կամ մեկամսյա ժամկետը կասեցնելու մասին անձին չտեղեկացնելու դեպքում նախնական հավանությունը համարվում է տրված*: Նախնական հավանություն տալու կամ նախնական հավանությունը մերժելու մասին ԿԲ խորհրդի որոշումը ենթակա չէ դատական կարգով բողոքարկման:

**Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումը** - Բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը ԿԲ-ի կողմից գրանցվելու համար ներկայացնում են հետևյալ *փաստաթղթերը՝ գրանցման դիմումը*, բանկի կամ օտարերկրյա բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի *արձանագրությունը բանկի կամ մասնաճյուղի կանոնադրությունը հաստատելու և բանկի ղեկավարներ ընտրելու (նշանակելու) վերաբերյալ*, ստեղծվող բանկի կամ մասնաճյուղի *ղեկավարների կենսագրական տվյալները, բանկի կանոնադրությունը* կամ օտարերկրյա բանկի կողմից հաստատված օտարերկրյա բանկի մասնաճյուղի կանոնադրությունը, *ղեկավարների ցուցակը, գործադիր տնօրենի (վարչության նախագահի) և գլխավոր հաշվապահի վավերացված ստորագրությունների նմուշները, բանկի կամ օտարերկրյա բանկի*

մասնաճյուղի ֆիրմային անվանման գրանցման փաստաթղթի պատճենը և ԿԲ-ի կողմից սահմանված այլ փաստաթղթեր: Սահմանված ամբողջական և բավարար փաստաթղթերը ստանալու պահից օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում, ԿԲ-ի խորհրդի որոշմամբ գրանցվում է բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը, կամ մերժվում է դրանց գրանցումը:

ԿԲ-ի կողմից մեկամսյա ժամկետում դիմումը չմերժելու դեպքում բանկը համարվում է գրանցված: ԿԲ-ի խորհուրդը կարող է մերժել գրանցման միջնորդագիրը, եթե ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ, ներկայացվել են ոչ ամբողջական կամ ոչ բավարար փաստաթղթեր:

Բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը գրանցվում է միայն ԿԲ-ում բացված համապատասխան հաշվում ԿԲ-ի սահմանած՝ բանկերի կանոնադրական կապիտալի նվազագույն չափով (50 մլն դրամ) միջոցների առկայության դեպքում: ԿԲ-ում գրանցվելու պահից բանկը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

Բանկային գործունեության լիցենզիայի տրամադրումը - ԿԲ-ի նախնական հավանությունը ստանալու պահից մեկ տարվա ընթացքում բանկը պարտավոր է լիցենզիա ստանալու համար դիմել Կենտրոնական բանկ: Դիմումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում գրանցված բանկին ԿԲ-ը տալիս է լիցենզիա, եթե բավարարվել են հետևյալ պայմանները՝ ԿԲ-ի կողմից սահմանված բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի լրիվ համալրումը (30 մլրդ դրամ), բանկային գործունեության համար ձեռք բերված կամ վարձակալված տարածքը, դրա տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են ԿԲ-ի սահմանած պահանջներին և բանկի գործունեության տնտեսական ծրագրին, ստեղծվել են բանկի ներքին կազմակերպական կառուցվածքն ու գործառնական համակարգը, բանկի ղեկավարներն ունեն սահմանված կարգով ստացած որակավորման և մասնագիտական համապատասխանության վկայականներ ու ԿԲ-ի կողմից սահմանված այլ պայմաններ:

ԿԲ-ը կարող է մերժել բանկին լիցենզիայի տրամադրումը, եթե բանկը գրանցելուց հետո բանկի ղեկավարների կողմից իրականացվել են ապօրինի, վարկաբեկիչ գործողություններ, փոփոխվել են պայմանները, բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք կամ նրանց ֆինանսական դրությունը:

## ԲԱՆԿԻ՝ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀՀ տարածքում գործող բանկերը ՀՀ տարածքում ստեղծվող մասնաճյուղ գրանցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացնում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հետևյալ փաստաթղթերը.

- Բանկի միջնորդագիրը,
- Մասնաճյուղի կանոնադրությունը՝ սահմանված ձևի տիտղոսաթերթով,
- ստեղծվող մասնաճյուղի ղեկավարի գրանցման վերաբերյալ բանկի միջնորդագիրը և ղեկավարի ու նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը,
- ստեղծվող մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը,
- մասնաճյուղի՝ համապատասխան առանձնացված տարածքի նկատմամբ բանկի սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության պայմանագրի պատճենը,
- սահմանված պահանջներին մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը,
- Մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Կենտրոնական բանկի կողմից բանկի մասնաճյուղի գրանցման վկայականը բանկին տրամադրվում է գրանցման մասին որոշումն ընդունվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Կենտրոնական բանկը մասնաճյուղի գրանցման միջնորդագիրը կարող է մերժել նաև, եթե մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը չի համապատասխանում Կենտրոնական բանկի պահանջներին, օրինակ, տնտեսական ծրագրում առկա է ներկայացված տվյալների անհամապատասխանություն կամ անարժանահավատություն, կամ ծրագրում կատարված էական կանխատեսումներն անիրատեսական են,

մասնաճյուղի առաջարկվող ներքին կազմակերպական կառուցվածքը և գործառնական համակարգը բավարար չեն բանկի ռիսկերի կառավարման համար, տնտեսական ծրագրում ճիշտ չեն գնահատված հնարավոր ռիսկերը և այլն:

### **ԲԱՆԿԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ՝ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ**

ՀՀ տարածքում գործող բանկերը և օտարերկրյա բանկերը ՀՀ տարածքում ստեղծվող ներկայացուցչություն գրանցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

- ներկայացուցչության գրանցման համար միջնորդագիրը,
- հիմնադիր բանկի կանոնադրության պատճենը, եթե որպես հիմնադիր հանդես է գալիս օտարերկրյա բանկը,
- ներկայացուցչության կանոնադրությունը,
- Բանկի կամ օտարերկրյա բանկի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածքը՝ ներկայացուցչություն ստեղծելու մասին,
- Բանկի կամ օտարերկրյա բանկի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածքը՝ ներկայացուցչության ղեկավար նշանակելու մասին,
- Ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ տեղեկանքը,
- Ներկայացուցչության գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը,
- Ներկայացուցչության տարածքի նկատմամբ բանկի սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության պայմանագրի պատճենը:

Կենտրոնական բանկի կողմից բանկի ներկայացուցչության գրանցման վկայականը բանկին տրվում է գրանցման մասին որոշումն ընդունվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Կենտրոնական բանկը բանկի կամ օտարերկրյա բանկի՝ ստեղծվող ներկայացուցչության գրանցման միջնորդագիրը կարող է մերժել նաև, եթե ԿԲ-ի կարծիքով ներկայացուցչություն բացելու հիմնավորումները բավարար չեն, միջնորդագրի տրման պահին, ինչպես նաև միջնորդագրի քննարկման ժամանակահատվածի ընթացքում բանկը խախտել է ԿԲ-ի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից առնվազն մեկը:

### **ԲԱՆԿԻ՝ ՀՀ-ԻՑ ԴՈՒՐՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

ՀՀ տարածքում գործող բանկը ՀՀ տարածքից դուրս մասնաճյուղ ստեղծելիս ԿԲ-ի համաձայնությունն ստանալու համար ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

- Բանկի միջնորդագիրը, և
- տեղծվող մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը,
- Մասնաճյուղի կանոնադրությունը,
- Բանկի միջնորդագիրը ստեղծվող մասնաճյուղի ղեկավարների գրանցման վերաբերյալ ու ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը,
- Մասնաճյուղի տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունը հավաստող փաստաթուղթը, որով նա պարտավորվել է բանկի մասնաճյուղի գրանցման (և (կամ) լիցենզավորման) պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ, ինչպես նաև պարտավորագիր տված անձի՝ այդ տարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության պայմանագրի պատճենը,
- մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

ՀՀ տարածքում գործող բանկը ՀՀ տարածքից դուրս ներկայացուցչություն ստեղծելիս ԿԲ-ի համաձայնությունն ստանալու համար ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

- միջնորդագիրը,

- Ներկայացուցչության կանոնադրությունը,
- Բանկի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածքը՝ ներկայացուցչության ղեկավար ընտրելու կամ նշանակելու մասին,
- Ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ տեղեկանքը,
- Ներկայացուցչության տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունը հավաստող փաստաթուղթը, ինչպես նաև պարտավորագիր տված անձի այդ տարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության պայմանագրի պատճենը:

Գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթը ներկայացվում է ԿԲ՝ մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցվելուց (լիցենզավորվելուց, արտոնագրվելուց) հետո 10-օրյա ժամկետում՝ կցելով մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցված կանոնադրությունը:

## **ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ, ԲԱՆԿԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱՂԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Բանկը կարող է ժամանակավորապես դադարեցնել իր մասնաճյուղի և (կամ) ներկայացուցչության գործունեությունը, բայց ոչ ավելի, քան **մեկ տարի ժամկետով**: Բանկի մասնաճյուղի, բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշման մեջ անհրաժեշտ է հստակ նշել այն ժամկետը, որի ավարտից հետո մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը համարվում է վերսկսված կամ գործունեությունը վերսկսելուց առնվազն 20 օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնել ԿԲ-ին:

Բանկի մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվությունը ստանալու համար բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

- մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցումը թույլատրելու մասին միջնորդագիր՝ բանկի կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
- կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ բանկի մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման մասին,
- մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման հիմնավորումները,
- բանկի մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման մասին որոշման ընդունման պահին մասնաճյուղի հաշվապահական հաշվեկշիռը:

*ԿԲ-ը կարող է թույլ չտալ բանկի մասնաճյուղի գործունեությունը ժամանակավոր դադարեցնել, եթե, փաստաթղթերում ներկայացվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ, փաստաթղթերը ներկայացվել են թերի, ԿԲ-ի հիմնավոր կարծիքով՝ բանկի հաճախորդների հետագա բնականոն սպասարկումն ապահովված չէ, տվյալ տարածաշրջանում բանկային ծառայությունների մատուցում չի իրականացվում որևէ բանկի կողմից և այլն:*

Փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 30-օրյա ժամկետում ԿԲ-ը որոշում է կայացնում թույլ տալ ժամանակավոր դադարեցնել բանկի մասնաճյուղի գործունեությունը կամ թույլ չտալ ժամանակավոր դադարեցնել բանկի մասնաճյուղի գործունեությունը՝ մերժման հիմքերի մասին տեղեկացնելով բանկին: ԿԲ-ի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար բանկի մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման միջնորդագրի քննության 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել: Անհրաժեշտ տեղեկություններ ստանալուց հետո միջնորդագրի քննության ժամկետը չպետք է գերազանցի 30-օրյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը: ԿԲ-ի կողմից 30-օրյա ժամկետում միջնորդագիրը չմերժելու կամ նշված ժամկետում կասեցնելու մասին բանկին չտեղեկացնելու դեպքում բանկի մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվությունը համարվում է տրված: 30-օրյա ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում բանկը մասնաճյուղի գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը տեղակայում է բանկի ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում բանկը ԿԲ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը: ԿԲ-ի կողմից գործունեության

Ժամանակավոր դադարեցման թույլտվության տրամադրման պահից նախատեսված ժամկետներում բանկը ԿԲ է ներկայացնում բանկի մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթը: Այդ փաստաթուղթը չներկայացնելու դեպքում բանկի մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում:

Բանկը կամ օտարերկրյա բանկը **ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման** թույլտվության ստացման համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

- Բանկի կամ օտարերկրյա բանկի միջնորդագիրը ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցումը թույլատրելու մասին՝ բանկի կամ օտարերկրյա բանկի կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
- Բանկի կամ օտարերկրյա բանկի իրավասու մարմնի որոշումը՝ բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման մասին:

Փաստաթղթերը ներկայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ԿԲ-ը թույլ է տալիս ժամանակավոր դադարեցնել բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գործունեությունը կամ թույլ չի տալիս, եթե ներկայացված փաստաթղթերը թերի, անարժանահավատ կամ կեղծ են՝ մերժման հիմքերի մասին տեղեկացնելով բանկին կամ օտարերկրյա բանկին: Բանկի ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցումը թույլատրելու որոշման ընդունման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում բանկը ներկայացուցչության գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում, և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը տեղակայում է բանկի ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը:

#### **ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ, ԲԱՆԿԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՂԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվություն ստանալու նպատակով բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվության տրամադրման մասին միջնորդագիրը՝ բանկի կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
- մասնաճյուղի գործունեության դադարեցման մասին բանկի իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածքը,
- մասնաճյուղի գործունեության դադարեցման հիմնավորումները,
- մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցման ուղղությամբ բանկի կողմից իրականացվելիք միջոցառումները, գործողությունները և դրանց կատարման ժամկետները,
- մասնաճյուղի գործունեության դադարեցման մասին որոշման ընդունման պահին մասնաճյուղի հաշվապահական հաշվեկշիռը:

Փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 30-օրյա ժամկետում ԿԲ-ը որոշում է կայացնում թույլատրել բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցումը կամ որոշում է կայացնում թույլ չտալ՝ մերժման հիմքերի մասին տեղեկացնելով բանկին: ԿԲ-ի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցման միջնորդագրի քննության 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել: Անհրաժեշտ տեղեկություններ ստանալուց հետո միջնորդագրի քննության ժամկետը չպետք է գերազանցի 30-օրյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը: ԿԲ-ի կողմից 30-օրյա ժամկետում միջնորդագիրը չմերժելու կամ նշված ժամկետում կասեցնելու մասին բանկին չտեղեկացնելու դեպքում բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվությունը համարվում է տրված: 30-օրյա ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում բանկը մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում, և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը տեղակայում է բանկի ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում բանկը ԿԲ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը: ԿԲ-ի կողմից գործունեության դադարեցման թույլտվության տրամադրման պահից նախատեսված ժամկետներում բանկը ԿԲ է ներկայացնում բանկի մասնաճյուղի



ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթը, բանկի մասնաճյուղի գրանցման վկայականը: Սահմանված փաստաթղթերը ԿԲ չներկայացնելու դեպքում բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում:

**ԿԲ-ը բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցման մասին որոշում է ընդունում, եթե մասնաճյուղը 6 ամսվա ընթացքում չի իրականացրել բանկային գործունեություն:**

Բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գործունեության դադարեցման դեպքում բանկը կամ օտարերկրյա բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

- բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գործունեության դադարեցումը թույլատրելու մասին միջնորդագիրը՝ բանկի կամ օտարերկրյա բանկի կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
- բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գործունեության դադարեցման մասին կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք,
- բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գրանցման վկայականը:

Փաստաթղթերը ներկայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ԿԲ-ը որոշում է կայացնում թույլ տալ բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գործունեության դադարեցումը կամ թույլ չտալ գործունեության դադարեցումը, եթե ներկայացված փաստաթղթերը թերի, անարժանահավատ կամ կեղծ են, հիմքերի մասին տեղեկացնելով բանկին կամ օտարերկրյա բանկին: Բանկի ներկայացուցչության գործունեության դադարեցումը թույլատրելու մասին որոշման ընդունման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում բանկը ներկայացուցչության գործունեության դադարեցման մասին տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում, և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը տեղակայում է բանկի ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում բանկը ԿԲ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը:

Բանկը 5 աշխատանքային օրվա ընթացքում ԿԲ է ներկայացնում ՀՀ տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղին կամ ներկայացուցչությանը՝ այլ երկրի համապատասխան իրավասու մարմնի կողմից գրանցումից հանելու փաստը վկայող փաստաթուղթը: Նշված փաստաթուղթը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ԿԲ-ը այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնին՝ վերջինիս կողմից համապատասխան գրառում կատարելու համար:

## **ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է բանկային գործունեության լիցենզիան անվավեր ճանաչել, եթե բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը լիցենզիա է ստացել լիցենզավորման ընթացակարգում ներկայացրած կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա:

**Կեղծ են համարվում այն տեղեկությունները կամ փաստաթղթերը, որոնց հիման վրա Կենտրոնական բանկը կայացրել է որոշում, բայց որը չէր կայացվի, եթե այդ տեղեկությունները կամ փաստաթղթերը լինեին ճիշտ և (կամ) արժանահավատ:**

Լիցենզիան անվավեր ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն անմիջապես հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներում: **Լիցենզիան անվավեր ճանաչելու որոշման ուժի մեջ մտնելու օրվանից բանկը գրկվում է բանկային գործունեություն իրականացնելու իրավունքից, բացառությամբ այն գործարքների, որոնք ուղղված են նրա ստանձնած պարտավորությունների կատարմանը, միջոցների իրացմանը և դրանց վերջնական բաշխմանը:**

**Լիցենզիան անվավեր ճանաչելու մասին Կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելու պահից բանկը ենթակա է լուծարման՝ օրենքով սահմանված կարգով:**

Լիցենզիան անվավեր ճանաչելու մասին ԿԲ-ի խորհրդի որոշումը դրա կայացման հիմքերի հետ միասին պետք է անմիջապես գրավոր հաղորդվի բանկին կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղին: Բանկի բանկային գործունեության լիցենզիան անվավեր ճանաչելու մասին ԿԲ-ի խորհրդի որոշման բողոքարկումը դատարան չի կասեցնում այդ որոշման գործողությունը՝ գործի ողջ դատական քննության ընթացքում:

## ԲԱՆԿԱՅԻՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

**Բանկային վերահսկողության չձևայնացված գործելակերպը** ներկայացված է եղել Մեծ Բրիտանիայի ԿԲ-ում, որտեղ վերահսկողությունը բանկերի հետ իրականացվել է խորհրդակցությունների, բանկի հետ անհատական շփումների միջոցով: Հոգեբանական ներգործությունը, շրջահայացությունն ու անհատական շփումները հանդիսացել են վերահսկողության առաջնային գործոնները: Անգլիայի բանկը յուրաքանչյուր բանկի հետ անհատական շփումները դիտարկել է որպես վերահսկողության բաղկացուցիչ գործիք: Կանխարգելիչ կարգավորման գործիքները հիմնված են եղել արտաքին (փաստաթղթային) վերահսկողության վրա: Այսինքն՝ իրականացվել է *փաստաթղթային կամ արտաքին վերահսկողության հիմքով*: Վերահսկողության ոչ ձևայնացված եղանակը կարող է լինել արդյունավետ այն պարագայում, երբ պահպանվում են դրա համար անհրաժեշտ որոշակի պայմանները՝ բանկերի ոչ մեծ քանակը, գլխադասային հզոր կառույցների, բանկերի և կարգավորիչ մարմնի միջև ավանդական սերտ համագործակցության, մենեջմենթի մասնագիտական բարձր հմտությունների ու բանկերի կառավարման արդյունավետ համակարգերի առկայությունը, հաշվապահական հաշվառման և աուդիտի որակյալ պրակտիկան: 1970-ականների սկզբին բրիտանական վերահսկողության համակարգը ճգնաժամ ապրեց, երբ տեղի ունեցավ բանկերի խոշորացումը: Այնուհետև Անգլիայի բանկը որդեգրեց վերահսկողության Եվրոպական մոդելը, որի դեպքում վերստուգումներն իրականացվում էին անկախ աուդիտորների կողմից՝ Անգլիայի բանկին ներկայացվող խստացված հաշվետվությունների ձևով: Բսկ 1998թ. Մեծ Բրիտանիան անցում կատարեց բոլոր տիպի ֆինանսական կառույցների միավորված վերահսկողության մոդելին, որն իրականացվում էր մեկ մարմնի՝ գործակալության կողմից: Բրիտանական միասնական վերահսկողության առանձնահատկությունն այն է, որ այդ կառույցում ձևավորվեց ֆինանսական օբյեկտների ինստիտուտը: ԱՄՆ-ի բանկային վերահսկողությունը հանդիսանում է ձևայնացված տեսչական վերահսկողություն, այսինքն՝ վերահսկողությունն իրականացվում է Դաշնային պահուստային համակարգի կողմից ինքնուրույն, տեղերում խիստ հսկողության ձևով: Այս մոտեցման հիմնական թերությունը չափազանց աշխատատարությունն է և բյուջետային միջոցների սահմանափակությունը: Սահմանափակումները հաղթահարելու նպատակով ամերիկյան վերահսկողությունը առավելապես ընդլայնում է հիմնախնդիրների վաղ բացահայտման՝ փաստաթղթային վերահսկողության շրջանակները, որը նաև հնարավորություն է տալիս բանկային բիզնեսի ծավալների ընդարձակման պարագայում պահպանել վերահսկողների թվաքանակը:

*Ամերիկյան և բրիտանական բևեռացված տարբեր մոտեցումները մարմնավորում են բանկային գործունեության կարգավորման ու վերահսկման երկու տարբեր մոդելները, ըստ որի, մեկը հիմնվում է առավելապես խորհրդակցական գործիքների և իշխանության ներգործության հոգեբանական գերակայությունների վրա, իսկ մյուսը՝ ձևայնացված, ակտիվ վերահսկողական գործողությունների վրա՝ նախապատվությունը տալով բանկերում տեսչական վերստուգումներին:*

*Եվրոպական մայրցամաքային մոդելում, համեմատ ամերիկյանի, միտվածությունը դեպի տեսչական վերստուգումները նվազ է, առկա է դրանք արտաքին աուդիտորներին պատվիրակելու հակվածությունը: Բանկային վերահսկողության այս մոդելը հիմնված է առավելապես կանխարգելիչ կարգավորող նորմերի (տնտեսական նորմատիվների) պահպանման գերակայության վրա, և կարևորվում է արտաքին վերահսկողության բաղադրիչը, իսկ տեսչական վերստուգումները առավելապես պատվիրակում է արտաքին աուդիտորներին:*

Ընդհանուր առմամբ տեսչական վերստուգումների համակարգի արդյունավետությունը որևէ երկրում պայմանավորված է վերահսկողների կամ աուդիտորների կողմից տեսչական վերահսկման գործառնության կատարման որակով, որի բնութագրիչներն են հանդիսանում մասնագիտական ունակությունները, որակավորումը, փորձը, քաղաքական և այլ ազդեցություններից զերծ լինելու հանգամանքը: *Ներկայումս երկրների մեծամասնությունը կիրառում են այս երկու մոդելները միաժամանակ:* ԲԳԿՎ-ն իրականացվում է բանկի ներքին աուդիտի, արտաքին անկախ աուդիտի, Լիազորված պետական մարմնի՝ ԿԲ-ի կողմից:

**Միջազգային պրակտիկայում իրականացվում է բանկային վերահսկողության երկու եղանակ՝**

- ❖ արտաքին կամ փաստաթղթային (ամենօրյա հեռակա վերահսկողություն off-site)
- ❖ տեսչական ստուգումներ (տեղերում վերստուգումներ on-site):

Փաստաթղթային եղանակը ենթադրում է վերահսկողության իրականացում բանկերից պահանջվող հաշվետվությունների միջոցով: *Այն ուղղված է առաջացող խնդիրների վաղ բացահայտմանը և ժամանակին*

*կամխմանը*: Որպեսզի փաստաթղթային վերահսկողությունը լինի արդյունավետ, հաշվետվությունները պետք է պարունակեն բանկերի մակրովերլուծությունն ապահովող տվյալներ, լինեն արժանահավատ, լիարժեք, բացահայտեն տարատեսակ թաքնված ռիսկերը, վեր հանեն բանկային համակարգի զարգացման հիմնական միտումները և այլն: **Փաստաթղթային վերահսկողության ժամանակ կիրառում են հետևյալ մոտեցումները՝**

- ✓ *փորձից և տեսությունից բխող եզրակացություններ,*
- ✓ *CAMELS ռեյտինգային քանակական համակարգը – կապիտալ, ակտիվներ, մենեջմենթ, եկամուտ, իրացվելիություն, ռիսկ (տրվում է այս ցուցանիշների քանակական և նորմատիվային գնահատումը),*
- ✓ *UBPR որակական գնահատման համակարգ – փաստաթղթային վերահսկողության համար տեղեկատվության աղբյուր են հանդիսանում բանկերից ստացված հաշվետվությունները և բանկերի հետ կապված անձանցից ստացված տեղեկությունները:*

**Տեսչական վերահսկողությունը ենթադրում է վերահսկող մարմնի կողմից տեղերում վերստուգումների իրականացում:** Վերստուգման են երթարկվում բանկի բոլոր փաստաթղթերը պարզելու ներկայացված հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենսդրական պահանջներին: **Տեսչական վերահսկողության ժամանակ կիրառվում են հետևյալ մոտեցումները.**

- *հերթական համարի վերստուգումներ – իրականացվում է ոչ ավելի, քան ֆինանսական տարին մեկ անգամ,*
- *արտահերթ համալիր ստուգումներ – նշանակվում է ԿԲ խորհրդի գաղտնի որոշմամբ,*
- *նպատակային վերստուգումներ – կոնկրետ ոլորտի ստուգում,*
- *թեմատիկ ուսումնասիրություններ – ընդգրկում է բանկի ֆինանսական վիճակը բնութագրող մի հատվածի վերստուգումը:*

**Տեսչական վերստուգումները լինում են՝**

- ❖ *ընտրանքային – ստուգվում են տարբեր ժամանակաշրջանների փաստաթղթերի մի մասը,*
- ❖ *համընդհանուր – որոշակի ժամանակաշրջանի կոնկրետ ոլորտի բոլոր գործառնությունները,*
- ❖ *խառը կամ համակցված – վերստուգվում են որոշակի կարճ ժամանակահատվածում համընդհանուր եղանակով, իսկ մնացած ժամանակաշրջանը՝ ընտրանքային,*
- ❖ *լուրջ կամ սահմանափակ – մեկ տիպի գործառնության վերստուգում՝ առանց ամբողջական ցիկլի դիտարկման,*
- ❖ *միջանցիկ – գործառնության ամբողջ ցիկլի ուսումնասիրություն:*

Ստուգման մեթոդաբանությունը առաջադրում է նաև միևնույն խնդրին անդրադարձի հաճախականության հարցը, ըստ որի՝ **ստուգումները լինում են՝**

- ❖ *սկզբնական – որոշակի ժամանակահատվածում տվյալ գործառնություններն /հարցերն/ առաջին անգամ են ստուգման ենթարկվում,*
- ❖ *լրացուցիչ – պայմանավորված է արդեն իսկ ստուգված գործառնությունների վերաբերյալ լրացուցիչ տվյալների ստացման անհրաժեշտությամբ*
- ❖ *կրկնակի – իրականացվում են, երբ նախորդ ստուգման ընթացքում ամբողջությամբ չեն բացահայտվել առաջադրված խնդիրները կամ ստուգման ակտում արված եզրահանգումներն ոչ հստակ ու վիճահարույց են:*

**Ստուգումները դասվում են նաև՝**

- ❖ *Մպասվելիք – սպասվելիք ստուգման դեպքում բանկը, նախապես տեղյակ լինելով, նախապատրաստվում է ստուգմանը, տնտեսվում է ստուգողների ժամանակը, բարձրանում է ստուգման արդյունավետությունը,*
- ❖ *Անակնկալ – անակնկալ ստուգումները լուծում են այնպիսի խնդիրներ, որոնք անհնարին է լուծել ստուգման տեղեկացվածության դեպքում:*

ՀՀ-ում արտահերթ համալիր վերստուգումներն ըստ էության անակնկալ են: Միջազգային պրակտիկայում կիրառվում է նաև վերստուգման անընդմեջ եղանակը, ըստ որի, վերստուգող մարմնի ներկայացուցիչը տևական ընթացքում գտնվում է բանկում, որը, օրինակ, հնարավորություն է տալիս ստուգել բոլոր խոշոր գործարքները:

Բանկային վերահսկողության (ԲՎ-ի) երկու եղանակները փոխադարձ լրացնում են միմյանց և կիրառվում զուգահեռաբար: ՀՀ-ում կիրառվում են երկու եղանակներն իրենց բոլոր մոտեցումներով:

**ԲԱՆԿԱՅԻՆ ԿԵՐԱՆՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Բանկային վերահսկողության մեթոդական մոտեցումները ընդունված է դասել հետևյալ տիպերի՝

- **ավանդական վերահսկողություն,**
- **ռիսկերի կառավարելիության կարողությունների վերահսկողություն /ՌԿԿՎ/:**

Բանկային վերահսկողության մեթոդական մոտեցումները տարանջատվում են՝

- **ըստ ներքևից վերև մեթոդական մոդելի,** որի տրամաբանությունը հետևյալն է. բանկի վիճակը և նրա հիմնախնդիրները վեր են հանվում որոշակի պահի դրությամբ՝ սխալների, թերությունների, բացթողումների արձանագրման միջոցով,
- **ըստ վերևից ներքև մեթոդական մոդելի,** որի մոտեցման դեպքում մոդելը հենվում է բանկի ընդհանուր ֆինանսական վերլուծության, իրականացվող քաղաքականության հիման վրա:

**Ավանդական վերահսկողության մոտեցումը** առավելապես հիմնվում է *առողջիտային վերստուգումների վրա՝ կենտրոնանալով հաշվապահական հաշվառման ու ֆինանսական հաշվետվությունների, կարգավորիչ նորմատիվային և ոչ նորմատիվային պահանջների ապահովման արժանահավատության խնդիրների վրա:* Այս մոտեցման դեպքում ռիսկերի նույնացումը և դրանց կառավարման արդյունավետության գնահատումը իրականացվում է որոշակի պահի դրությամբ, քանակական ցուցանիշների հիման վրա: Այն հիմնվում է նախորդ շրջանի կամ «պատմական» տեղեկատվության վրա: Պահանջում է մասնագիտական խոր գիտելիքներ ու գործնական կարողություններ, վերահսկողության բարդ մեթոդների կիրառում և միաժամանակ բախվում է վերահսկողության համար անհրաժեշտ միջոցների սահմանափակության հետ: *Մեթոդի գերակայություններից է գործառնությունների առանձին տեսակների ու խմբերի, ներառյալ ակտիվների հնարավոր կորուստների պահուստավորման ճշտության, ռիսկերը սահմանափակող ու կանխող ներքին մեխանիզմների առկայության ուսումնասիրությունը:*

**Ավանդական բանկային վերահսկողությունը** դիտարկում են **«ներքևից վերև» մեթոդական մոդելի մեջ,** ըստ որի՝ բանկի վիճակն ու մտահոգիչ հիմնախնդիրները վեր են հանվում որոշակի պահի դրությամբ: Ավանդական մոդելով ստացվող եզրակացությունները բավականաչափ հիմնավոր են սխալների, թերությունների, բացթողումների արձանագրման առումով, մինևույն ժամանակ սահմանափակ են առաջացող խորքային կամ համակարգային պատճառների և ապագայում առաջացող հնարավոր խնդիրների բացահայտման առումով: *Ելնելով մոդելի ներքին տրամաբանությունից՝ վերստուգման արդյունքում ձևավորվող առաջարկությունները համապատասխանաբար հանգում են բարդություններ ծնող ռիսկերի նվազեցման՝ ռիսկից խուսափելու կամ շրջանցելու միջոցառումներին, և չեն անդրադարձնում կամ սահմանափակ են անդրադարձնում ռիսկերի կառավարման որակական բարելավմանը:* Տեսականորեն ռիսկերը շրջանցող և սահմանափակող միջոցառումները հանգեցնում են հաճախորդներին մատուցվող ծառայությունների և սպասարկումների տարատեսակների ու դրանց ծավալների կրճատմանը:

Բանկային վերահսկողության մեթոդական մոտեցումներից է նաև **ռիսկերի կառավարելիության կարողությունների վերահսկողությունը (ՌԿԿՎ):** *Վերահսկողության ՌԿԿՎ-ի մեթոդիկական հիմնվում է ընդհանուր ֆինանսական վիճակի կառավարման, ռիսկերի կառավարման քաղաքականության, բանկի գործունեության գնահատման վրա: Այս մոտեցման դեպքում առանձին գործառնությունների մանրամասն դիտարկումը ուղղված է հիմնական նպատակի բացահայտմանը: Վերահսկողության արդյունքում ձևավորված առաջարկությունները նպատակաուղղվում են ընդհանուր կառավարման ու ռիսկերի կառավարման մեթոդների ու մեխանիզմների բարելավմանը:*

*ՌԿԿՎ-ի մոտեցումը ենթադրում է կառույցի համակարգային հիմնախնդիրների բացահայտում, դրանց բուն պատճառների վերհանում, կազմակերպության ֆինանսական վիճակի ճշգրիտ որոշում և վճարունակության ու իրացվելիության աստիճանի բացահայտում, ինչպես նաև ֆինանսական կառույցի կառավարման համակարգի պոտենցիալ կարողության, իրական գործունակության ու ամբողջականության գնահատում:*

*Համաձայն ՌԿԿՎ-ի՝ ռիսկերի անցանկալի հետևանքների նվազեցման գործողությունները բաժանվում են 3 խմբի.*

- *ռիսկերի շրջանցում կամ խուսափում,*

- *ռիսկերի կառավարման որակական բարելավում և դրանց հետևանքների մեղմացում*, որը ենթադրում է ռիսկերի ստանձնում ու միաժամանակ դրանց վերահսկում և կանտակարգում կորուստների կրճատման նպատակով,
- *ռիսկերի հատուցում (ծառայությունների համար նախատեսված տոկոսավճարներն ու միջնորդավճարներն են):*

**ՌԿԿՎ-ի տրամաբանությունը համընկնում է «վերնից ներքև» մոտեցման հետ, որը հենվում է բանկի ընդհանուր ֆինանսական վերլուծության, տարվող քաղաքականության, կառավարման համակարգերի գործնական դրսևորումների մոնիտորինգի վրա:** Այս մոդելում ծագած հիմնախնդիրների, դրանց հետ կապված ռիսկերի բնորոշմանն ու նույնացմանը հետևում է դրանց քանակական արժեքի գնահատումը, կազմակերպության բարձր ռիսկային, առավելապես մեծ ուշադրություն պահանջող ոլորտների որոշումը, որոնց ուսումնասիրությունը բացահայտում է կազմակերպության ռիսկերի կառավարման համակարգի և պրակտիկայի արդյունավետության աստիճանը: ՌԿԿՎ-ի միջոցով է կատարվում նաև արտաքին միջավայրի համակարգային հիմնախնդիրների նույնացումն ու սահմանումը, պատճառների հասցեագրումը: Բանկի կառավարման գնահատման առանցքում կարևորվում է արտաքին միջավայրի ռիսկերը /մրցակցությունը, շուկայական ռիսկերը/ և որոշակի պահին բնորոշ համակարգային հիմնախնդիրները կառավարելու հնարավորություն ընձեռող մեխանիզմների առկայությունը:

**Այսպիսով, Ռիսկերի կառավարման մոդելը** հարմարեցվում է տվյալ ֆինանսական կառույցին՝ պայմանավորված նրա գործունեությամբ: Իսկ **Ավանդական վերահսկողության եզրակացությունը** կախված է կազմակերպության առողջ պրակտիկայից և ներկայացնում է բանկի ֆինանսական կայունության վիճակը: **ՌԿԿՎ-ի եզրակացությունը** նույնպես գնահատում է բանկի վիճակը, սակայն մինևույն ժամանակ շեշտը դնում է կազմակերպության ռիսկերի կառավարման ունակության վրա:

Երկու մոդելների կիրառման դեպքում առանձնակի անդրադարձ է կատարվում վարկային պորտֆելին, վարկերի համապատասխանությանը, գործող քաղաքականությանն ու գործելակարգերին: Նշված բոլոր մոդելներում կիրառվում են վերահսկողության ընդհանուր գործիքներն ու մեխանիզմները: Վերահսկող լիազորված մարմնի վերահսկողության արդյունավետությունը էապես կապված է բանկի ներքին վերահսկողության կամ աուդիտի ծառայության գործունեությունից:

## **ՀՀ ԿԲ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

Հայաստանի բանկային համակարգի ձևավորումը, զարգացումը, կարգավորման և վերահսկողության համակարգի կայացումը ընթացել են զուգահեռաբար: ՀՀ ԿԲ-ը բանկային վերահսկողության համակարգի ձևավորման ընթացքում ի սկզբանե հիմնվել է Բազելյան կոմիտեի չափորոշիչների վրա և որդեգրել է ամերիկյան բանկային վերահսկողության **կոշտ** մոդելը: *Բանկային համակարգի կարգավորման և վերահսկողության կայացման գործընթացը իրականացվել է փուլային խնդիրներով.*

- բանկային համակարգի կայացման փուլում բանկերի կարգավորումն ու վերահսկումը միասնական հիմքով իրականացնելու սկզբունքը,
- բանկերի ֆինանսական վիճակի գնահատման ճշգրիտ գործիքների ներդրման իրականացում,
- բանկի նկատմամբ արտաքին և տեղական հսկողության փոխլրացնող համակարգի ներդրում,
- առաջացող հիմնախնդիրների վաղ բացահայտում և չեզոքացում,
- բանկերի կողմից պարտադիր նորմատիվային պահանջների հետևողական պահպանում:

Բանկերի վերահսկողության ձևավորման և կայացման հիմնական փուլը ընդգրկել է 1993-96թթ., երբ փաստացի ձևավորվել են օրենսդրական ու ենթօրենսդրական նորմատիվային փաստաթղթերը, վերահսկողության մեթոդաբանության ստորաբաժանումները: Կառուցվածքային և կազմակերպական առումով ձևավորվել է ԿԲ-ի վերահսկողության ստորաբաժանումը՝ ըստ Բազելյան չափորոշիչների պահանջների: Մինչև 1997թ. վերջը ՀՀ բանկային կարգավորման և վերահսկողության կոշտ քաղաքականության արդյունքում հաղթահարվել են բարդ ճգնաժամային իրավիճակները, զերծ մնացել քաղաքական ճնշումներից, հաջողությամբ մասնավորեցրել են բանկերը: Այսպիսով, ԿԲ-ի կողմից ապահովվել է բանկային վերահսկողության անկախությունը քաղաքական միջամտությունից, ձևավորվել են տեսչական և փաստաթղթային վերահսկողության կառույցները, վերահսկողության նորմերը համապատասխանեցվել են Բազելյան կոմիտեի չափորոշիչներին: Վերստուգումներն իրականացվում են

համաձայն ԿԲ-ի կողմից մշակված ուղեցույցի, ներդրվել են CAMELS, UBPR համակարգերը և մոնիթորինգի գործիքը: 2006 թ. հունվարի 1-ից ՀՀ ԿԲ-ն ստանձնել է ՀՀ ֆինանսական հատվածի կարգավորումն ու վերահսկողությունը, որի նպատակը ֆինանսական շուկայում ընդհանուր ռիսկերի վերահսկումն է:

ԿԲ-ն իրականացնում է ամենօրյա հեռակա վերահսկողություն ԿԲ-ի կողմից ընդունված նորմատիվային իրավական ակտերով և ԿԲ ներկայացված հաշվետվությունների ու այլ փաստաթղթերի տեղեկությունների ստուգման միջոցով: *Ստուգումներն իրականացնում է ԿԲ-ի ստուգումների համար լիազորված ստորաբաժանումը (վերստուգող ստորաբաժանում):* Ստուգումներն անցկացվում են ԿԲ-ի խորհրդի կամ նախագահի որոշմամբ և դրանց հիման վրա վերստուգող ստորաբաժանման ղեկավարի տված լիազորագրով սահմանված պաշտոնատար անձանց կողմից: Լիազորագիրը տրվում է վերստուգող ստորաբաժանման ձևաթերթի վրա՝ առանց ԿԲ-ի կնիքի դրոշման: ԿԲ-ը կարող է իր կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերով սահմանել վերստուգող խմբի անդամների նվազագույն քանակը: Բանկերում ստուգումների իրականացման արդյունքում կազմված հաշվետվություններում ու ակտերում (տեղեկանք) պարունակվող տեղեկությունները համարվում են բանկային գաղտնիք:

## ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

*Տնտեսական նորմատիվների համակարգը բանկային գործունեության կարգավորման հիմնական գործիքներից է և նպատակաուղղված է բանկային ռիսկերի ազդեցության նվազեցմանը:* Բանկային գործունեության տնտեսական նորմատիվները որոշակի բացարձակ ու հարաբերական ցուցանիշների քանակական սահմանափակումներ են, որոնց նպատակն է զսպել բանկային ռիսկերը: Այն պարտադիր է բոլոր առևտրային բանկերի համար: Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները սահմանվում են Կանոնակարգ 2-ով, որի միջոցով կարգավորվում են բանկերի համար սահմանվող նորմատիվների հաշվարկման կարգը, սահմանաչափերը և այլն:

Տնտեսական նորմատիվների համակարգը ներառում է՝

- ✓ **հիմնական տնտեսական նորմատիվները**՝ կրում են համընդհանուր բնույթ և միասնական են բոլոր բանկերի համար,
- ✓ **հատուկ տնտեսական նորմատիվները** սահմանվում են միայն արտակարգ դեպքերում՝ մինչև վեց ամիս տևողությամբ, բանկային համակարգի կայունության ապահովման նպատակով:

Բանկերի գործունեության կարգավորման, բանկային համակարգի ֆինանսական կայունության ապահովման նպատակով ԿԲ-ը սահմանում է բանկային գործունեության **հիմնական տնտեսական նորմատիվները:**

**Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվներն են՝**

- ❖ **բանկի կանոնադրական կապիտալի (50 մլն.դրամ) և ընդհանուր կապիտալի (30 մլրդ.դրամ) նվազագույն չափերը,**
- ❖ **բանկի կապիտալի համարժեքության նորմատիվները՝**
  - հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (9%),
  - ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային (նվազագույն) հարաբերակցությունը (12%).
- ❖ **բանկի իրացվելիության նորմատիվները՝**
  - բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (ընդհանուր իրացվելիության 15%),
  - բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը (ընթացիկ իրացվելիության 60%),
  - բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև սահմանային հարաբերակցությունը (իրացվելիության ծածկույթի նորմատիվ),
  - բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև սահմանային հարաբերակցությունը (զուտ կայուն ֆինանսավորման նորմատիվ),

- ❖ մեկ փոխառուի (չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 20%-ը), խոշոր փոխառուների գծով (500%-ը) ռիսկի առավելագույն չափը: Խոշոր փոխառու է համարվում այն անձը, որի ռիսկը գերազանցում է ընդհանուր կապիտալի 5 %-ը,
- ❖ բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը (չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 5%) և բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը (20%),
- ❖ բանկի պարտատերերի գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը),
- ❖ ԿԲ-ում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը,
- ❖ արտարժույթի տնօրինման նորմատիվը,
- ❖ կապիտալի և ակտիվների (այդ թվում՝ հետհաշվեկշռային) սահմանային հարաբերակցության չափը (չափերը) (լիներիջի նորմատիվ),
- ❖ պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության չափը (չափերը),
- ❖ հաճախորդի պարտավորության և եկամտի սահմանային հարաբերակցության չափը (չափերը):

**Հիմնական տնտեսական նորմատիվները պարտադիր են** և պետք է նույնը լինեն ՀՀ տարածքում գործող միևնույն տեսակի լիցենզիա ունեցող բոլոր բանկերի համար: Հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող ու հաշվարկից նվազեցվող տարրերի կազմն ու հաշվարկում մասնակցող տարրերի սահմանաչափերը սահմանում է Կենտրոնական բանկը:

ԿԲ-ը կարող է առանձին բանկի համար սահմանել ավելի խիստ հիմնական տնտեսական նորմատիվներ, քան սահմանված են այլ բանկերի համար, եթե բանկի ցուցանիշերի ամփոփ գնահատականը ցածր է ԿԲ-ի սահմանած ցուցանիշերի ամփոփ գնահատականի չափից, կամ տվյալ բանկի ֆինանսական ցուցանիշերը վատթարացել են, կամ բանկը գործունեություն է ծավալում բարձր ռիսկայնություն ունեցող ոլորտներում, կամ եթե բանկը ԿԲ-ի կողմից համարվում է համակարգային նշանակություն ունեցող բանկ:

Բանկը ԿԲ-ի կողմից համարվում է համակարգային նշանակություն ունեցող, եթե այդ բանկի ֆինանսական վիճակի վատթարացումը կամ անվճարունակությունը կամ սնանկությունը կամ լուծարումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ ՀՀ ֆինանսական համակարգի և (կամ) տնտեսության այլ հատվածների վրա: ՀՀ ֆինանսական համակարգի և (կամ) տնտեսության այլ հատվածների վրա ունեցած էական բացասական ազդեցությունը գնահատվում է՝ հիմք ընդունելով տվյալ բանկի մեծությունը, ՀՀ ֆինանսական համակարգի այլ մասնակիցների հետ փոխկապակցվածությունը, բանկի կողմից մատուցվող ծառայությունների փոխարինելիությունը, բանկի կողմից իրականացվող գործառնությունների բնույթը, բարդությունը և (կամ) ռիսկայնությունը:

## **ԲԱՆԿԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՀՄԱՆՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄԱՀՄԱՆԱԶԱՓԵՐԸ**

Գործող բանկի կանոնադրական կապիտալի նվազագույն չափը հիսուն միլիոն ՀՀ դրամ է: ՀՀ տարածքում գործող և նոր ստեղծվող բանկերի կանոնադրական կապիտալը կարող է համալրվել բացառապես ՀՀ դրամով:

Առևտրային բանկերի համար ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է երեսուն միլիարդ (30.000.000.000) Հայաստանի Հանրապետության դրամ:

Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն11 նորմատիվ) սահմանվում է 9 տոկոս:

Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն12 նորմատիվ) սահմանվում է 12 տոկոս:

Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն2՝ նորմատիվ) սահմանվում է 15 տոկոս:

Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն2<sup>1</sup> նորմատիվ) սահմանվում է 4 տոկոս:

Այն դեպքում, երբ երկրորդ խմբի որևէ արտարժույթով արտահայտված պարտավորությունները ամսվա միջին օրական հաշվարկով գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5 տոկոսը, ապա յուրաքանչյուր այդպիսի երկրորդ խմբի արտարժույթի համար տվյալ ամսվան հաջորդող ամսվա համար հաշվարկվում է Ն<sup>22</sup> նորմատիվ, որն իրենից ներկայացնում է ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների ու ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև հարաբերակցություն: Ն<sup>22</sup> նորմատիվի նվազագույն մեծությունը սահմանվում է 4 տոկոս:

**Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն<sup>22</sup> նորմատիվ) սահմանվում է 60 տոկոս:**

Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն<sup>21</sup> նորմատիվ) սահմանվում է 10 տոկոս:

Այն դեպքում, երբ երկրորդ խմբի որևէ արտարժույթով արտահայտված պարտավորությունները ամսվա միջին օրական հաշվարկով գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5 տոկոսը, ապա յուրաքանչյուր այդպիսի երկրորդ խմբի արտարժույթի համար տվյալ ամսվան հաջորդող ամսվա համար հաշվարկվում է Ն<sup>22</sup> նորմատիվ, որն իրենից ներկայացնում է ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների ու ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև հարաբերակցություն: Ն<sup>22</sup> նորմատիվի նվազագույն մեծությունը սահմանվում է 10 տոկոս:

**Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է.**

- բոլոր արժույթներով՝ 100% (Ն<sup>23</sup> նորմատիվ),
- յուրաքանչյուր նշանակալի արժույթի (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի) գծով՝ 60%՝ մինչև 2021 թվականի հունիսի 30-ը, 80%՝ 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը, 100%՝ 2022 թվականի հունվարի 1-ից (Ն<sup>23</sup> (FX) նորմատիվ, որտեղ FX-ը տվյալ արժույթի ISO (ԻՍՕ) 4217 կոդն է):

**Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է.**

- բոլոր արժույթներով՝ 100% (Ն<sup>24</sup> նորմատիվ),
- յուրաքանչյուր նշանակալի արժույթի (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի) գծով՝ 60%՝ մինչև 2021 թվականի հունիսի 30-ը, 80%՝ 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը, 100%՝ 2022 թվականի հունվարի 1-ից (Ն<sup>24</sup>(FX) նորմատիվ, որտեղ FX-ը տվյալ արժույթի ISO (ԻՍՕ) 4217 կոդն է):

**Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (Ն<sup>31</sup> նորմատիվ) չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 20 տոկոսը:**

**Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը (Ն<sup>32</sup> նորմատիվ) չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 500 տոկոսը:**

**Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը (Ն<sup>41</sup> նորմատիվ) չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 5 տոկոսը:**

**Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը (Ն<sup>42</sup> նորմատիվ) չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 20 տոկոսը:**

**ՀՀ տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերի կողմից ՀՀ դրամով ներգրավված միջոցների դիմաց ԿԲ-ում դրամով տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 2 տոկոսի չափով:**

**ՀՀ տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերի կողմից արտարժույթով, ինչպես նաև առարկայագուրկ մետաղական հաշիվներով ներգրավված միջոցների դիմաց ԿԲ-ում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 18 տոկոսի չափով:**

**Արտարժույթի տնօրինման նորմատիվը բաղկացած է երկու տարրերից՝ արտարժույթային դիրք և ըստ առանձին արտարժույթների դիրք:**



Արտարժույթային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը սահմանվում է 10 տոկոս:

Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը սահմանվում է 7 տոկոս:

Բանկի կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը, Ն11, Ն12, Ն2<sup>1</sup>, Ն2<sup>11</sup>, Ն2<sup>12</sup>, Ն2<sup>2</sup>, Ն2<sup>21</sup>, Ն2<sup>22</sup>, Ն2<sup>4</sup>, Ն2<sup>4</sup>(FX), Ն3<sup>1</sup>, Ն3<sup>2</sup>, Ն4<sup>1</sup>, Ն4<sup>2</sup> հիմնական տնտեսական նորմատիվները հաշվարկվում են ամսական, Ն2<sup>3</sup> և Ն2<sup>3</sup>(FX) հիմնական տնտեսական նորմատիվները հաշվարկվում են շաբաթական և ամսական, պարտադիր պահուստավորման նորմատիվը՝ որպես կանոն, 28 կամ 35 օրերի կտրվածքով՝ ըստ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահուստավորման օրացույցի, իսկ արտարժույթի տնօրինման նորմատիվը՝ օրական կտրվածքով:

**Բանկի հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը որոշվում է**

$$\text{Ն11} = \frac{\text{Կ}_{\text{հիմն}}}{\text{ՌԿԱ}} \text{ քանաձևով,}$$

որտեղ՝  
 Կ<sub>հիմն</sub> - հիմնական կապիտալն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,  
 ՌԿԱ - վարկային ռիսկի, շուկայական ռիսկի և գործառնական ռիսկի հանրագումարն է, որը հաշվարկվում է հետևյալ քանաձևով՝  
 $\text{ՌԿԱ} = \text{ՎՌ} + (25/3) * (\text{ՇՌ} + \text{ԳՌ}),$   
 ՎՌ - վարկային ռիսկն է,  
 ՇՌ - շուկայական ռիսկն է,  
 ԳՌ - գործառնական ռիսկն է:

**Բանկի ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը որոշվում է**

$$\text{Ն12} = \text{Կ}_{\text{ընդ}} / \text{ՌԿԱ} \text{ քանաձևով,}$$

որտեղ՝  
 Կ<sub>ընդ</sub> - ընդհանուր կապիտալն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,  
 ՌԿԱ - վարկային ռիսկի, շուկայական ռիսկի և գործառնական ռիսկի հանրագումարն է, որը հաշվարկվում է հետևյալ քանաձևով՝  
 $\text{ՌԿԱ} = \text{ՎՌ} + (25/3) * (\text{ՇՌ} + \text{ԳՌ}),$   
 ՎՌ - վարկային ռիսկն է,  
 ՇՌ - շուկայական ռիսկն է,  
 ԳՌ - գործառնական ռիսկն է:

**Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը հաշվարկվում է՝**

$$\text{Ն2}^1 = \text{Աբի} / \text{Ա}_{\text{ընդ}} \text{ քանաձևով,}$$

որտեղ՝  
 Աբի - միջին օրական հաշվարկով բարձր իրացվելի ակտիվներն են ամսվա ընթացքում, որը որոշվում է

$$\text{Աբի} = (\text{Աբի}_1 + \text{Աբի}_2 + \dots + \text{Աբի}_n) / n \text{ քանաձևով,}$$

որտեղ՝  
 Աբի<sub>1</sub> + Աբի<sub>2</sub> + ... + Աբի<sub>n</sub> - բանկի բարձր իրացվելի ակտիվներն են ըստ օրերի, իսկ «n»-ը՝ հաշվետու ամսվա օրերի թիվն է:

Ա<sub>ընդ</sub> - միջին օրական հաշվարկով ընդհանուր ակտիվներն են ամսվա ընթացքում, որը որոշվում է

$$A_{\text{ընդ}} = A_{\text{ընդ}1} + A_{\text{ընդ}2} + \dots + A_{\text{ընդ}n} / n \text{ քանաձևով,}$$

որտեղ՝

Ա<sub>ընդ1</sub>+Ա<sub>ընդ2</sub>+...+Ա<sub>ընդn</sub> - բանկի ընդհանուր ակտիվներն են ըստ օրերի, իսկ «n»-ը՝ հաշվետու ամսվա օրերի թիվը:

Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև հարաբերակցությունը հաշվարկվում է՝

$$L2^2 = A_{\text{բի}} / \text{Պցպ} \text{ քանաձևով,}$$

որտեղ՝

$$A_{\text{բի}} = A_{\text{բի}1} + A_{\text{բի}2} + \dots + A_{\text{բի}n} / n,$$

որտեղ՝

Ա<sub>բի1</sub>+Ա<sub>բի2</sub>+...+Ա<sub>բին</sub> - բանկի բարձր իրացվելի ակտիվներն են ըստ օրերի, իսկ «n»-ը՝ հաշվետու ամսվա օրերի թիվն է,

Պցպ - միջին օրական հաշվարկով ցպահանջ պարտավորություններն են ամսվա ընթացքում, որը որոշվում է

$$\text{Պցպ} = (\text{Պցպ}_1 + \text{Պցպ}_2 + \dots + \text{Պցպ}_n) / n \text{ քանաձևով,}$$

որտեղ՝ Պցպ<sub>1</sub>+ Պցպ<sub>2</sub>+...+ Պցպ<sub>n</sub> - բանկի ցպահանջ պարտավորություններն են ըստ օրերի, իսկ «n»-ն՝ հաշվետու ամսվա օրերի թիվն է:

Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (L2<sup>3</sup> նորմատիվ) հաշվարկվում է՝

$$L2^3 = \text{ԲԻԱ} / \text{ԶԴԱ} \text{ քանաձևով,}$$

որտեղ՝

ԲԻԱ- բանկի բարձր իրացվելի ակտիվներն են,

ԶԴԱ - բանկի զուտ դրամական արտահոսքն է:

Յուրաքանչյուր նշանակալի արժույթի (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի) գծով բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (L2<sup>3</sup>(FX) նորմատիվ) հաշվարկվում է՝

$$L2^3(\text{FX}) = \text{ԲԻԱ}(\text{FX}) / \text{ԶԴԱ}(\text{FX}) \text{ քանաձևով, որտեղ}$$

ԲԻԱ (FX) - տվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկի բարձր իրացվելի ակտիվներն են,

ԶԴԱ (FX) – տվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկի զուտ դրամական արտահոսքն է:

Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (L2<sup>4</sup> նորմատիվ) հաշվարկվում է՝

$$L2^4 = Z_{\text{ԿՄ}} / A_{\text{ԿՄ}} \text{ քանաձևով, որտեղ՝}$$

Z<sub>ԿՄ</sub> – բանկին հասանելի կայուն միջոցներն են, որը որոշվում է՝ համաձայն հետևյալ քանաձևի՝

$$Z_{\text{ԿՄ}} = Z_{\text{ԿՄ}1} * Z_{\text{ԿԿ}1} + Z_{\text{ԿՄ}2} * Z_{\text{ԿԿ}2} + \dots + Z_{\text{ԿՄ}n} * Z_{\text{ԿԿ}n}, \text{ որտեղ}$$

ՀԿՄ<sub>1</sub>, ՀԿՄ<sub>2</sub>, ՀԿՄ<sub>n</sub>- բանկին հասանելի կայուն միջոցների տարատեսակներն են,  
ԱԿԿ<sub>1</sub>, ԱԿԿ<sub>2</sub>, ԱԿԿ<sub>n</sub> – բանկին հասանելի կայուն միջոցների կշիռներն են,  
ԱԿՄ – բանկին անհրաժեշտ կայուն միջոցներն է, որը որոշվում է՝ համաձայն հետևյալ բանաձևի՝

$$ԱԿՄ = ԱԿՄ_1 * ԱԿԿ_1 + ԱԿՄ_2 * ԱԿԿ_2 + \dots + ԱԿՄ_n * ԱԿԿ_n, \text{ որտեղ}$$

ԱԿՄ<sub>1</sub>, ԱԿՄ<sub>2</sub>, ԱԿՄ<sub>n</sub>- բանկին անհրաժեշտ կայուն միջոցների տարատեսակներն են,  
ԱԿԿ<sub>1</sub>, ԱԿԿ<sub>2</sub>, ԱԿԿ<sub>n</sub>, - բանկին անհրաժեշտ կայուն միջոցների կշիռներն են:

Յուրաքանչյուր նշանակալի արժույթի (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի) գծով բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն2<sup>4</sup>(FX) նորմատիվ) հաշվարկվում է՝

$$\text{Ն2}^4(\text{FX}) = \text{ՀԿՄ}(\text{FX}) / \text{ԱԿՄ}(\text{FX}) \text{ բանաձևով, որտեղ՝}$$

ՀԿՄ (FX)– տվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկին հասանելի կայուն միջոցներն է, որը որոշվում է՝ համաձայն հետևյալ բանաձևի՝

$$\text{ՀԿՄ}(\text{FX}) = \text{ՀԿՄ}_1(\text{FX}) * \text{ՀԿԿ}_1(\text{FX}) + \text{ՀԿՄ}_2(\text{FX}) * \text{ՀԿԿ}_2(\text{FX}) + \dots + \text{ՀԿՄ}_n(\text{FX}) * \text{ՀԿԿ}_n(\text{FX}), \text{ որտեղ}$$

ՀԿՄ<sub>1</sub>(FX), ՀԿՄ<sub>2</sub>(FX), ՀԿՄ<sub>n</sub>(FX)- տվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկին հասանելի կայուն միջոցների տարատեսակներն են,

ՀԿԿ<sub>1</sub>(FX), ՀԿԿ<sub>2</sub>(FX), ՀԿԿ<sub>n</sub>(FX) – տվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկին հասանելի կայուն միջոցների կշիռներն են,

ԱԿՄ(FX) – տվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկին անհրաժեշտ կայուն միջոցներն է, որը որոշվում է՝ համաձայն հետևյալ բանաձևի՝

$$\text{ԱԿՄ}(\text{FX}) = \text{ԱԿՄ}_1(\text{FX}) * \text{ԱԿԿ}_1(\text{FX}) + \text{ԱԿՄ}_2(\text{FX}) * \text{ԱԿԿ}_2(\text{FX}) + \dots + \text{ԱԿՄ}_n(\text{FX}) * \text{ԱԿԿ}_n(\text{FX}), \text{ որտեղ}$$

ԱԿՄ(FX)<sub>1</sub>, ԱԿՄ(FX)<sub>2</sub>, ԱԿՄ(FX)<sub>n</sub>- տվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկին անհրաժեշտ կայուն միջոցների տարատեսակներն են,

ԱԿԿ<sub>1</sub>(FX), ԱԿԿ<sub>2</sub>(FX), ԱԿԿ<sub>n</sub>(FX), - տվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկին անհրաժեշտ կայուն միջոցների կշիռներն են:

Ն2<sup>3</sup>(FX) և Ն2<sup>4</sup>(FX) նորմատիվների հաշվարկման ժամանակ նշանակալի են համարվում այն արժույթները, որոնցով արտահայտված պարտավորությունները գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5%-ը:

**Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (Ն3՝ նորմատիվ) սահմանվում է՝**

$$\text{Ն3՝} = \text{Ռիսկ} / \text{Կ}_{\text{ռիսկ}} \text{ բանաձևով,}$$

որտեղ՝

Ռիսկ-բանկի կողմից մեկ փոխառուին (անձին) և նրա հետ փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի, այդ թվում՝ բանկային հաշվի վարկավորման, բոլոր այլ փոխառությունների, ֆակտորինգային, լիզինգային գործառնությունների, տրամադրված նախավճարների, կանխավճարների, բանկի մատուցած ծառայության կամ ապրանքի դիմաց տարածամկետ վճարումների, ակրեդիտիվների, անձի կամ նրա հետ փոխկապակցված անձանց թողարկված արժեթղթերում ներդրումների (ներառյալ՝ մուրհակների), բանկի թղթակցային հաշիվների ու ավանդների, դեբիտորական պարտավորությունների, ռեպո համաձայնագրերի, ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերի, ածանցյալ գործիքների գծով առաջացող պահանջների, ինչպես նաև բանկի նկատմամբ ցանկացած հիմքով ծագած այլ պարտավորությունների, այդ թվում՝ նրա կողմից այլ անձին (որը փոխառուի հետ փոխկապակցված անձ չէ) նույն բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց տրված երաշխիքների կամ երաշխավորությունների, ինչպես նաև ցանկացած այլ ապահովվածության արժեքի (ապահովված ընդհանուր պարտավորությունը չգերազանցող

գումարի չափով), նրա պարտավորությունների դիմաց տրված երաշխիքների և երաշխավորությունների, վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների, այլ բանկերի կողմից տվյալ բանկի դրամական միջոցների հաշվին և դրանցով ապահովված միևնույն անձանց տրամադրված փոխառությունների և (կամ) երաշխիքների (եթե այդ փոխառության վերադարձելիության ռիսկը ստանձնել է տվյալ բանկը) գումարն է:

$U_{\text{ընդ}}$  - բանկի ընդհանուր կապիտալն է:

**Խոշոր փոխառությունների գծով ռիսկի առավելագույն չափը (Ն3<sup>2</sup> նորմատիվ) սահմանվում է՝**

$$N3^2 = \Omega_{\text{րիսկ}} / U_{\text{ընդ}} \text{ քանաձևով:}$$

**Խոշոր փոխառու է այն անձը, որի գծով ռիսկը գերազանցում է բանկի ընդհանուր կապիտալի 5 տոկոսը: Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը (Ն4<sup>1</sup> նորմատիվ) սահմանվում է՝**

$$N4^1 = \Omega_{\text{րիսկ}} / U_{\text{ընդ}} \text{ քանաձևով:}$$

**Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը (Ն4<sup>2</sup> նորմատիվ) սահմանվում է՝**

$$N4^2 = \Omega_{\text{րիսկ}} / U_{\text{ընդ}} \text{ քանաձևով:}$$

Կենտրոնական բանկը սահմանում է բանկերի կողմից ներգրավված ցպահանջ, ժամկետային և խնայողական ավանդների և այլ պարտավորությունների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների չափը, պահուստավորման և պահուստավորված միջոցների օգտագործման կարգը: Պարտադիր պահուստավորումը սահմանված կարգով չկատարելու դեպքում Կենտրոնական բանկը բանկից տույժ է գանձում՝ Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափով, բայց ոչ ավելի, քան միջին հաշվով պակաս պահուստավորված յուրաքանչյուր օրվա համար պակաս պահուստավորված գումարի մեկ տոկոսը: Կենտրոնական բանկի խորհուրդը բանկի, Կենտրոնական բանկի նախագահի, վերստուգող ստորաբաժանման առաջարկության հիման վրա կամ իր նախաձեռնությամբ կամ բանկի հետ պայմանագրի կնքմամբ բանկի նկատմամբ նշանակված տույժի գանձումը հետաձգելու, տույժի չափը նվազեցնելու կամ տույժի գանձման ժամանակացույց սահմանելու որոշում է ընդունում, եթե տույժի գանձումը կարող է հանգեցնել բանկի՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված չափանիշներով հիմնավորված ծանր ֆինանսական կացությանը:

**ԿԲ-ում պահուստավորման են ենթակա բանկի և օտարերկրյա բանկի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղի կողմից ՀՀ դրամով, արտարժույթով, ինչպես նաև մետաղական հաշիվներով ներգրավված միջոցները: ՀՀ դրամով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումն իրականացվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով ներգրավված միջոցների դիմաց՝ 10%-ը ՀՀ դրամով, իսկ 8%-ը՝ ԱՄՆ դոլարով, եվրոյով ներգրավված միջոցների դիմաց՝ 10%-ը ՀՀ դրամով, իսկ 8%-ը՝ եվրոյով, իսկ մնացած այլ արժույթներով, ինչպես նաև մետաղական հաշիվներով ներգրավված միջոցների դիմաց՝ 10%-ը ՀՀ դրամով, իսկ 8%-ը՝ ԱՄՆ դոլարով:**

Արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետ կապված ռիսկը կրում է բանկը:

**Արտարժույթի տնօրինման նորմատիվի հաշվարկման նպատակով արտարժույթային դիրքը բանկի արտարժույթով, ինչպես նաև արտարժույթային ռիսկ պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների միջև եղած տարբերությունն է: Դրամական ակտիվները կամ պարտավորությունները պարունակում են արտարժույթային ռիսկ, երբ դրանց գծով ստացվելիք կամ վճարվելիք գումարների մեծությունները հաշվարկվում են արտարժույթի և/կամ արժույթային զամբյուղի՝ դրամի նկատմամբ փոխարժեքի միջոցով և, հետևաբար, կարող են տատանվել վերջինիս փոփոխությամբ պայմանավորված: Արտարժույթի տնօրինման նորմատիվի հաշվարկման իմաստով արտարժույթային ակտիվ կամ պարտավորություն են համարվում նաև թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորները, ինչպես նաև թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորներով արտահայտված պահանջներն ու պարտավորությունները, մետաղական հաշիվները: Արտարժույթային փակ դիրքը բանկի արտարժույթով ակտիվների և պարտավորությունների միջև եղած քանակական հավասարությունն է:**

Արտարժույթային բաց դիրքը բանկի արտարժույթով ակտիվների և պարտավորությունների միջև եղած քանակական անհավասարությունն է:

Համախառն արտարժույթային դիրքը հաշվարկվում է որպես տարբեր արտարժույթների դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

Արտարժույթային երկար դիրքը արտարժույթով բանկի ակտիվային հաշիվների մնացորդները գերազանցում են արտարժույթով պարտավորությունների հաշիվների մնացորդներին:

Արտարժույթային կարճ դիրքը արտարժույթով բանկի պարտավորությունների հաշիվների մնացորդները գերազանցում են արտարժույթով ակտիվային հաշիվների մնացորդներին:

Արտարժույթի առաջին խմբի մեջ մտնում են ՄԴՌ-ը, ՄԴՌ-ի զամբյուղի մեջ մտնող արտարժույթները, շվեյցարական ֆրանկը, կանադական դոլարը, շվեդական կրոնը, դանիական կրոնը, ավստրալիական դոլարը և բանկային ոսկին: Արտարժույթի երկրորդ խմբի մեջ մտնում են այլ արտարժույթները:

## **ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ: ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՌԻՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՈԼՈՐՏՆԵՐԸ)**

ՀՀ բանկային գործունեության վերստուգումները կարգավորվում են «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» և «Բանկերի ու բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքներով: «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» օրենքի 5՝ գլուխը սահմանում է ԿԲ-ի կողմից իրականացվող ստուգումների և վերահսկողության կարգն ու պայմանները: Համաձայն օրենքի՝ *ԿԲ-ը ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի և լիցենզիա ստացած այլ ֆինանսական կազմակերպությունների ստուգումները իրականացնում է օրենքով նախատեսված հիմքերով*: ԿԲ-ն կարող է վերստուգող անձանց վերաբերյալ իրեն հայտնի դարձած տեղեկությունները հայտնել օտարերկրյա պետություններում բացառիկ վերահսկողության իրավունք ունեցող համապատասխան մարմիններին:

**Ստուգման պայմանները** - Ստուգումներն անցկացվում են վերստուգող անձի հիմնադիր փաստաթղթերի, կառավարման բոլոր մարմինների ներքին ակտերի, կատարված գործառնությունների արդյունքում կազմված հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, ֆինանսական հաշվետվությունների, ներքին և արտաքին գրագրությունների, պայմանագրերի, էլեկտրոնային կամ փաստաթղթային կրիչների վրա պահպանվող տեղեկատվության ուսումնասիրության ու վերլուծության միջոցով: Կողմնակի անձանց մուտքը վերստուգող խմբին հատկացված տարածք արգելվում է: Աշխատանքային օրվա ավարտին այդ տարածքը կնքվում և հանձնվում է վերստուգվող անձի պահպանությանը:

**Ստուգման ուղղությունները (ուղորտները)** – Ստուգումները կարող են իրականացվել հետևյալ ուղղություններով՝

- հիմնադիր փաստաթղթերի օրինական ստուգում,
- ընդհանուր կապիտալի մեծության և նորմատիվների վերլուծություն ու գնահատում,
- իրացվելիության վերլուծություն և գնահատում,
- պարտավորությունների վերլուծություն ու գնահատում,
- կառավարման որակի գնահատում,
- ֆինանսական արդյունքների (եկամուտներ, ծախսեր) վերլուծություն և գնահատում,
- ռիսկերի վերլուծություն ու գնահատում,
- դրամական միջոցների հոսքերի վերլուծություն և գնահատում,
- հաշվետվություններում և տեղեկատվություններում արտացոլված տվյալների արժանահավաստության ստուգում,
- ԿԲ-ի կողմից տրված հանձնարարականների ու առաջարկությունների կատարման ընթացքի և արդյունքի ստուգում,
- ֆինանսական գործառնությունների առանձին տեսակների օրինական ստուգում,
- տարածքի և տեխնիկական հագեցվածության ստուգում,
- տարածքային ստորաբաժանումների գործունեության ստուգում,
- լիցենզավորման ենթակա գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի ու պահանջների վերստուգվող անձի գործունեության համապատասխանության ստուգում:

Ստուգումների ընթացքում կարող են կատարվել վերլուծություն և գնահատում: Ստուգման ենթական ուղղությունները որոշվում են ԿԲ-ի խորհրդի կամ նախագահի անհատական իրավական ակտերով: Տվյալ վերստուգվող անձի ստուգման արդյունքների ամփոփման և ներկայացման ժամկետը որոշվում է ԿԲ-ի խորհրդի կամ նախագահի անհատական իրավական ակտով: Մինչև ստուգումն իրականացնելը ԿԲ-ի խորհրդի, նախագահի կամ վերստուգող ստորաբաժանման պահանջով վերստուգվող անձը պարտավոր է նախապատրաստել կամ ԿԲ ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները: **Ստուգման ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում կազմակերպության մասնակիցների մասնակցությամբ անցկացվում է արդյունքների նախնական քննարկում, որի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, իսկ ստուգման ավարտից հետո՝ հաշվետվություն:** Ստուգման հաշվետվությունը կազմվում է երկու օրինակից, որոնք վերստուգող խմբի կողմից ստորագրվում և հանձնվում են վերստուգվող անձի ղեկավարությանը: Բանկի կողմից կարող են ներկայացվել առարկություններ և բացատրություններ, որոնց քննարկումը կազմակերպվում է ԿԲ-ի նախագահի սահմանած ժամկետներում ու կարգով:

**ՎԵՐՍՏՈՒԳՎՈՂ ԱՆՁԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ԽՄԲԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Վերստուգվող անձի պարտականությունները:** Վերստուգվող անձը պարտավոր է վերստուգող խմբի համար՝

- ✓ ապահովել ստուգման ընթացքում վերստուգող անձի ազատ (անարգել) ելքն ու մուտքը վերստուգվող անձի շենք կամ ծառայողական տարածքներ,
- ✓ ստուգման առաջին օրը կազմակերպել վերստուգող խմբի անդամների հանդիպում վերստուգվող անձի գործադիր մարմնի ղեկավարի և ստուգմանն աջակցող իրավասու անձանց հետ
- ✓ հատկացնել աշխատանքային տարածք բոլոր անհրաժեշտ պայմաններով,
- ✓ տրամադրել հաճախորդներից ստացված բողոքները և առաջարկությունը,
- ✓ կազմակերպել հանդիպում վերստուգվող անձի հաճախորդների կամ մասնակիցների հետ:

Վերստուգվող անձը պարտավոր է կատարել վերստուգող խմբի ղեկավարի և անդամների օրինական պահանջները: Արգելվում է խոչնդոտել կամ միջամտել վերստուգող խմբի անդամների օրինական գործողություններին: ԿԲ-ի խորհուրդը, նախագահը, վերստուգող ստորաբաժանումը ստուգումների նպատակով կարող են հանձնարարել բանկին հաճախորդից, պարտատերերից, մասնակիցներից պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն:

**ԿԲ-ը պատասխանատվություն է կրում ժամանակավորապես տրամադրված փաստաթղթերի ապահովության և վերադարձելիության համար:**

**Վերստուգող խմբի իրավունքները և պարտականությունները:** Վերստուգող խումբը ստուգումներ իրականացնելու նպատակով իրավասու է՝

- անարգել մուտք գործել վերստուգվող անձի բոլոր տարածքները, բացառությամբ դրամապահոցի, որտեղ մուտքը կատարվում է միայն վերստուգվող անձի համապատասխան աշխատակիցների ուղեկցությամբ,
- օգտվել ստուգման համար անհրաժեշտ առկա տեխնիկական միջոցներից,
- պահանջել անհրաժեշտ փաստաթղթերը,
- վերստուգվող անձի ղեկավարությանը և իրավասու աշխատողներին ներկայացնել այլ հիմնավոր պահանջներ:

Վերստուգող խումբը պարտավոր է ստուգումներն իրականացնել օրենքով սահմանված կարգով և հաշվետվությունը ներկայացնել ԿԲ-ի խորհրդին ու նախագահին՝ սահմանված ժամկետում և կարգով:

**ԲԱՆԿԵՐԻ ՆԿԱՏԱՍԽԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Բանկային վերահսկողության արդյունքների հիման վրա ԿԲ-ն իրավասու է բանկերի նկատմամբ կիրառել **ներգործության երկու տեսակի միջոցներ**

➤ **նախագգուշական կամ կանխարգելիչ**

➤ **հարկադրական կամ տուգանային:**

**Կանխարգելիչ միջոցների կիրառումը արդարացված է թերությունների բացահայտման վաղ փուլերում:** Յուրաքանչյուր առանձին դեպքում բանկի նկատմամբ ներգործության միջոցների կիրառումը բխում է՝

- թույլ տրված խախտումների բնույթից,
- խախտումների առաջացման պատճառներից,
- խախտում թույլ տված բանկի ընդհանուր ֆինանսական վիճակից,
- ֆինանսական ծառայությունների շուկայում բանկի ունեցած դիրքից:

**Նախագգուշական ներգործության միջոցները կիրառվում են այն դեպքում, երբ բանկը վարում է ռիսկային և չհիմնավորված գործունեություն, սակայն բացահայտված թերություններն անմիջապես չեն վտանգել բանկի ավանդատուների և պարտատերերի շահերը, թեև կարող են կիրառվել նաև ավելի բարդ, ճգնաժամային իրավիճակների ձևավորման ժամանակ:** Նման ներգործության միջոցների կիրառումը նախատեսում է բանկի գործադիր ղեկավարության, իսկ որոշ դեպքերում՝ բանկի ռազմավարական ներդրողների կողմից բացահայտված խախտումների վերացմանը նպաստակառնող վաղ և կառուցողական մոտեցում, ինչպես նաև լիազորված վերահսկող մարմնի հետ բանկի համագործակցության պատրաստակամություն՝ որոշակի պարտականությունների ստանձամբ:

**Կանխարգելիչ միջոցները բովանդակային առումով կարող են ներառել՝**

- բացահայտված թերությունների մասին բանկի ղեկավարության տեղեկացումը,
- առաջացած իրավիճակի շտկմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը,
- բացահայտված թերությունների վերացմանը ուղղված ծրագրի, ինչպես նաև դրա իրականացման ընթացքում բանկի նկատմամբ լրացուցիչ վերահսկողության սահմանման առաջարկության ներկայացումը վերահսկող մարմնին:

Բանկի հանդեպ ներգործության կարևոր միջոց է բանկի ռազմավարությունը կանխորոշող բաժնետերերի նկատմամբ ներգործելու հնարավորությունը, որը ճգնաժամային իրավիճակներում առավել համարժեք քայլերի իրականացման երաշխիքներից է, այդ թվում՝ լրացուցիչ ներդրումների ապահովման առումով: Կարգավորող մարմինը, ի դեմս ԿԲ-ի, պայմանագրային հիմքով տվյալ բանկի համար սահմանում է կարգավորման ու վերահսկման ժամկետային առանձնահատուկ գործելակարգեր, տնտեսական նորմատիվների առավել խիստ պահանջներ, որի արդյունքները հիմք պետք է հանդիսանան հետագայում կարգավորման ու վերահսկման ստանդարտ կարգավիճակին վերադառնալու կամ օրենսդրությամբ սահմանված այլ ներգործության միջոցների կիրառման համար:

**ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԵՄՆՅ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՅՆԵՐԸ**

**Կենտրոնական բանկի կողմից բանկերի նկատմամբ պատժամիջոցներ կարող են կիրառվել, եթե՝**

- բանկի կանոնադրական հիմնադրամը կամ ընդհանուր կապիտալի այլ տարրերը համալրվել են օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով,
- խախտվել են բանկային գործունեությունը կարգավորող օրենքների, դրանց հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև բանկի ներքին իրավական ակտերի պահանջները,
- բանկի, մասնաճյուղի կանոնադրությունը փոփոխվել և լրացվել են օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով,
- խախտվել են բանկի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները կամ, ԿԲ-ի կարծիքով, բանկն իրականացրել է այնպիսի գործողություններ (գործունեություն), որոնք կարող են վտանգել ավանդատուների կամ բանկի այլ պարտատերերի շահերը,
- խախտվել են հաշվապահական հաշվառում վարելու կանոնները, ինչպես նաև ֆինանսական կամ այլ հաշվետվությունների ներկայացման և հրապարակման կարգն ու պայմանները, և (կամ) այդ փաստաթղթերում ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տվյալներ,
- բանկը չի կատարել ԿԲ-ի կողմից սույն օրենքով սահմանված կարգով տրված հանձնարարականը,
- բանկի ցուցանիշերի ամփոփ գնահատականը ցածր է ԿԲ-ի սահմանած՝ բանկերի ցուցանիշերի ամփոփ գնահատականի չափից,

- Բանկը «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին երաշխիքային վճարների վճարումը,
- խախտվել են բանկի մասնակցությամբ ֆինանսական խմբի գործունեությունը կարգավորող օրենքների և (կամ) դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջները:

**Բանկի ղեկավարներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով բանկի շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և կատարեն բանկի նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով:** Եթե բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտում են օրենքների, այլ նորմատիվ իրավական և բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, ապա խորհուրդը պարտավոր է ձեռնարկել միջոցներ այդ խախտումների վերացման և հետագայում չկրկնման ուղղությամբ:

Բանկի ղեկավարները բանկի առջև պատասխանատվություն են կրում իրենց դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով բանկին պատճառված իրական վնասի համար՝ ՀՀ օրենսդրության համաձայն: Եթե բանկին վնաս պատճառած արարքն իրականացրել են բանկի մեկից ավելի ղեկավարներ, ապա նրանք բանկի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Անձն ազատվում է բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ այն համոզմունքով, որ իր գործողությունները ելնում են բանկի շահերից: Մասնավորապես՝

- եթե ողջամիտ գործարար տրամաբանությունից ելնելով՝ կայացվել են որոշումներ, նույնիսկ եթե դրանք բանկին հետագայում հասցրել են այնպիսի վնասներ, որոնց առաջացումն այդ որոշումն ընդունելիս հստակորեն հաշվի է առնվել որպես բիզնես ռիսկ,
- եթե ղեկավարի կողմից սխալ կամ թերի որոշումների ընդունումը եղել է բարեխիղճ՝ առանց վնաս պատճառելուն հատկապես ուղղված միտման, և եթե այդ որոշումների ընդունմամբ չեն խախտվել օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջները:

Բանկի ղեկավարների պաշտոնից ազատվելը չի ազատում նրանց իրենց մեղքով բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից:

## **ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏՄԱՄԻՋՈՑՆԵՐԸ**

Օրենքով սահմանվում են վերստուգվող անձանց և դրանց ղեկավարների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները՝ օրենքի պահանջները խախտելու դեպքում: «Բանկերի ու բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով՝ ԿԲ-ն իրավասու է բանկերի նկատմամբ կիրառել հետևյալ պատժամիջոցները:

- **Նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարական** – նախազգուշացմամբ արձանագրվում է թույլ տրված խախտումը, և բանկը տեղեկացվում է տվյալ խախտման անթույլատրելիության մասին: ԿԲ-ի կողմից տրվում է հանձնարարական սահմանված ժամկետում իրականացնել խախտման վերացման կամ ապագայում այն կանխելուն ուղղված միջոցառումներ: Հանձնարարականի կատարումը պարտադիր է նախազգուշացում ստացած բանկի համար:
- **Տուգանք** – այն գանձվում է ԿԲ-ի հայցով դատարանի որոշմամբ, եթե բանկի ղեկավարը համաձայն չէ տուգանքի նշանակման կամ տուգանքի չափի հետ: Գումարը գանձվում է բանկի թղթակցային հաշվից՝ հօգուտ պետական բյուջեի: Տուգանքի չափը սահմանում է ԿԲ-ը: Իսկ ղեկավարների վրա դրված տուգանքները գանձվում են նրանց անձնական միջոցներից՝ ի օգուտ պետական բյուջեի: Տուգանքի գումարի չափը չպետք է հանգեցնի տուգանվող բանկի ծանր ֆինանսական կացությանը:
- **Բանկի ղեկավարներին որակավորման վկայականից զրկում** – բանկի ղեկավարները զրկվում են որակավորման վկայականից ԿԲ-ի որոշմամբ, եթե՝
  - *միտումնավոր խախտել են օրենքներն ու այլ իրավական ակտերը,*
  - *գործել են անհիմն և վտանգավոր, խոչընդոտել վերստուգումներին,*
  - *կատարել են այնպիսի գործողություններ, որոնց հետևանքով բանկը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս,*
  - *կատարել են անձնական շահերից բխող գործողություններ, որոնք հակասում են բանկի կամ բանկի հաճախորդների շահերին,*



- *անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք են դրսևորել իրենց ծառայողական պարտականությունների նկատմամբ,*
  - *չեն համապատասխանում ԿԲ-ի կողմից սահմանված որակավորման չափանիշներին,*
  - *չեն կատարել ԿԲ-ի հանձնարարականը կամ անտեսել են ԿԲ-ի նախազգուշացումը:*
- **Լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում** – Բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում ԿԲ-ի Խորհրդի որոշմամբ: Լիցենզիան կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե՝
- *խախտվել են բանկային գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները,*
  - *բանկը լիցենզիա ստանալուց հետո 1 տարվա ընթացքում չի իրականացրել բանկային գործունեություն,*
  - *բանկը ԿԲ-ի կողմից սահմանված ժամկետում չի վերացրել խախտումները,*
  - *դադարել է բանկի գործունեությունը:*

Օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում նաև այն դեպքում, երբ օտարերկրյա բանկն իր գրանցման կամ հիմնական գործունեության վայրի երկրում զրկվել է բանկային գործունեություն իրականացնելու իրավունքից:

### **ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ**

Բանկային գործունեության կարգավորման կարևոր տարր են հանդիսանում օրենսդրությամբ սահմանված **սահմանափակումները: Ի տարբերություն տնտեսական նորմատիվների, որոնք ունեն կանխարգելիչ բնույթ, սահմանափակումները գործում են ուղղակիորեն և նպատակաուղղված են ռիսկերի չեզոքացմանը: Սահմանափակումները բաժանվում են 3 տեսակի:**

- **Բանկի կապիտալում մասնակցություն** – այս սահմանափակումը իրագործվում է ԿԲ-ի կողմից ցանկացած անձի նշանակալից մասնակցության վերաբերյալ համաձայնություն տալու միջոցով: Մասնակցության սահմանափակման միջոցով արգելակվում է այն անձանց մուտքը բանկ, ովքեր նախկինում կատարած գործողությունների համար դատապարտվել են, դատավճռով զրկվել են պաշտոն զբաղեցնելու իրավունքից, սնանկ են ճանաչվել, ունեն չմարված պարտավորություններ կամ հանգեցրել են որևէ անձի սնանկացման:
- **Ակտիվային գործառնությունների սահմանափակումներ** – այս սահմանափակումներն երկակի են: Մի կողմից, բանկին արգելվում է վարկեր տրամադրել որևէ անձի՝ վերջինիս կողմից թողարկված և բանկի կողմից տեղաբաշխված արժեթղթերից բխող պարտավորությունների կատարման համար: Մյուս կողմից, բանկին արգելվում է առանց ԿԲ-ի նախնական համաձայնության կատարել այնպիսի գործարքներ, որոնց արդյունքում բանկի մասնակցությունը մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում կկազմի 10% և նման այլ դեպքերում: Բանկին արգելվում է նաև իր բաժնետոմսերը զեղչելը, գնելը կամ հատուցման այլ կերպ ձեռք բերելը, դրանք գրավ ընդունելով վարկ տրամադրելը:
- **Բանկի ընդհանուր գործունեության սահմանափակումները:** - Սրանք բազմաբնույթ են: Մի խումբը արգելող բնույթ ունի, մյուս խումբն արգելում է բանկերին այնպիսի գործարքներ կնքել, որոնք սահմանափակում են բանկերի ազատ տնտեսական մրցակցությունը կամ բանկի հետ փոխկապակցված անձիք զբաղեցնում են շուկայում գերիշխող դիրք: ԿԲ-ը կարող է սահմանափակումներ նախատեսել բանկի վարկային, ավանդային, ֆինանսական գործառնությունների առանձին տեսակների համար կամ դրանց իրականացման համար հատուկ կարգ սահմանել: Բանկերին արգելվում է այնպիսի գործարքներ կնքել, որոնք սահմանափակում են բանկերի ազատ տնտեսական մրցակցությունը:

### **ԲԱՆԿԵՐԻ ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանվում են ՀՀ տարածքում գործող **բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների,**

ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների անվճարունակության և սնանկության հասկացություններն ու հատկանիշները, անվճարունակության և սնանկության կանխարգելմանն ուղղված միջոցառումների անցկացման կարգն ու պայմանները, ինչպես նաև բանկերի սնանկության հետևանքով նրանց լուծարման ընթացակարգը: Բանկերի անվճարունակության և սնանկության գործերի վարույթի կարգը սահմանվում է սույն օրենքով, այլ օրենքներով և ՀՀ Կենտրոնական բանկի իրավական ակտերով:

**Բանկը համարվում է անվճարունակ, եթե՝**

- սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին- բանկն իր հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին սպառած է համարում, եթե անվճարունակ համարվելու պահին նրա հիմնական կապիտալի մեծությունը փոքր է Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամանակահատվածի ընթացքում տվյալ բանկի հիմնական կապիտալի կեսից, կամ
- ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները, կամ
- բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից, կամ՝
- պարբերաբար խախտում է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը: Խախտման պարբերականությունը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը, և պետք է միևնույնը լինի ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերի համար:

**Բանկի անվճարունակությունը ճանաչվում է նշված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում՝** բացառապես Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Վերոնշյալ անվճարունակության հիմքերից որևէ մեկը բացահայտելու դեպքում Կենտրոնական բանկը երկշաբաթյա ժամկետում կարող է՝

- ✓ նշանակել ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար և հիփոթեքային կառավարիչ, եթե բանկը ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկող է, կամ
- ✓ բանկի սնանկության մասին դիմում ներկայացնել դատարան:

**Բանկի սնանկությունը՝ ԿԲ-ի դիմումի հիման վրա դատարանի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է:** Նման դեպքում բանկը ենթակա է լուծարման՝ օրենքով սահմանված կարգով:

**Բանկը կարող է սնանկ ճանաչվել բացառապես Կենտրոնական բանկի դիմումի հիման վրա՝** ելնելով սահմանված հիմքերից որևէ մեկից: *Բանկի սնանկության մասին դիմումով ԿԲ-ը դատարան է դիմում, եթե՝*

- առկա է անվճարունակության հիմքերից որևէ մեկը, կամ՝
- ադմինիստրացիայի գործունեության ընթացքում ԿԲ-ին ակնհայտ է դառնում, որ բանկը լուծարելու դեպքում հնարավոր է պահպանել բանկի միջոցների առավել մեծ քանակ, քան ադմինիստրացիայի գործունեությունը շարունակելիս, կամ
- չի հաջողվում վերականգնել բանկի կայուն վճարունակությունը:

*Սահմանված հիմքերի առկայության դեպքում ԿԲ-ի խորհուրդը քննարկում և որոշում է կայացնում բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին:*

Բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ *հնգօրյա ժամկետում*, ԿԲ-ը դատարան է ներկայացնում բանկի սնանկության մասին դիմում՝ առաջարկելով լուծարային կառավարչի թեկնածություն (թեկնածություններ):

Դատարանի կողմից բանկի սնանկության մասին գործի քննության ժամանակ կիրառվում է միայն լուծարային վարույթ: *Բանկերի սնանկության վարույթի ընթացքում հաշտության համաձայնություն չի կարող կնքվել:* Բանկի սնանկության գործով դատավարությունում գործին մասնակցող անձինք են պարտապան բանկը, Կենտրոնական բանկը և լուծարային կառավարիչը:

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՆ

Ադմինիստրացիան բանկի կառավարման հատուկ մարմին է, որի ղեկավարին և անդամներին նշանակում է Կենտրոնական բանկը՝ օրենքով սահմանված կարգով:

**Ադմինիստրացիայի գործունեության խնդիրն է՝**

- *բանկի վերակազմակերպման միջոցով նրա ավանդատուների ու բանկային հաշվի անվանատերերի պահանջների բավարարումը, և (կամ)՝*

- *բանկի ակտիվների ու պարտավորությունների մի մասը կամ դրանք ամբողջությամբ վաճառելը, և (կամ)՝*
- *բանկի ակտիվները հնարավոր կարճ ժամկետում հավաքագրելու (իրացնելու) միջոցով բանկի ֆինանսական կայունության վերականգնումը, և (կամ)՝*
- *բանկի կանոնադրական կապիտալն ավելացնելու կամ օրենքով սահմանված կարգով փոխառությունների միջոցով ներդրումների ներգրավմամբ բանկի ֆինանսական կայունության վերականգնումը, և (կամ)՝*
- *բանկի ստանձնած պարտավորությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այլ անձի փոխանցելու միջոցով նրա ֆինանսական կայունության վերականգնումը, և (կամ)՝*
- *բանկի ֆինանսական առողջացմանն ուղղված օրենքով չարգելված այլ միջոցառումների իրականացումը:*

Ադմինիստրացիան գործում է ֆինանսական առողջացման ծրագրին համապատասխան: Ֆինանսական առողջացման ծրագիրը, դրանում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատում է ԿԲ-ը: Ադմինիստրացիան կարող է ԿԲ ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու առաջարկություններ:

**Ադմինիստրացիայի գործունեության ընթացքում բանկի կառավարման բոլոր մարմինների լիազորություններն ամբողջությամբ անցնում են ադմինիստրացիայի ղեկավարին:**

*Ադմինիստրացիայի գործունեության ընթացքում արգելվում է բանկի մասնակցի (բաժնետիրոջ) պահանջի բավարարումը բանկի կանոնադրական կապիտալում նրա ունեցած բաժնի (ավանդի) առանձնացման մասով՝ կապված բանկի հիմնադիրների կազմից նրա դուրս գալու հետ, արգելվում է նաև բանկի մասնակիցների (բաժնետերերի, փայատերերի) պարտատիրոջ (պարտատերերի) պահանջով բանկի կանոնադրական կապիտալում մասնակցի (բաժնետիրոջ, փայատիրոջ) բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու նպատակով այդ բաժնեմասն առանձնացնելը կամ բաժնեմասին համապատասխան բանկի միջոցներից Վճարում կատարելը (այդ թվում՝ բնեղենով):*

Ադմինիստրացիայի գործունեության ընթացքում բանկի նկատմամբ պահանջները կարող են զիջվել միայն ադմինիստրացիայի համաձայնությամբ, եթե դա նախատեսված է բանկի ֆինանսական առողջացման ծրագրով:

ԿԲ-ն իրավասու է նշանակել ադմինիստրացիա (միանձնյա կամ կոլեգիալ և հիփոթեքային կառավարիչ): Ադմինիստրացիայի ղեկավար նշանակելու մասին ԿԲ-ի խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և երկօրյա ժամկետում ենթակա է հրապարակման՝ մամուլով և (կամ) գանգվածային լրատվության այլ միջոցներով:

*Ադմինիստրացիայի գործունեության ժամկետը սահմանվում է բանկի ֆինանսական առողջացման ծրագրով՝ մինչև մեկ տարի ժամկետով: ԿԲ-ի կողմից բանկի սնանկության մասին դիմումը դատարան ներկայացնելիս, բանկի ադմինիստրացիայի գործունեությունը շարունակվում է մինչև դատարանի կողմից լուծարային կառավարիչ նշանակելը:*

Ֆինանսական առողջացման ծրագրով սահմանված ժամկետը լրանալուց հետո ԿԲ-ը կարող է այն երկարաձգել ևս մեկ տարով: Ադմինիստրացիայի գործունեության ժամկետը երկարաձգելիս ԿԲ-ը համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ է կատարում ֆինանսական առողջացման ծրագրում:

*ԿԲ-ի կողմից ադմինիստրացիայի ղեկավարի նշանակման պահից ադմինիստրացիայի ղեկավարն իրականացնում է անվճարունակ բանկի ակտիվների և պարտավորությունների գույքագրումն ու գնահատումը:* Գնահատման արդյունքում ադմինիստրացիայի ղեկավարը ԿԲ-ի խորհրդի անհատական որոշմամբ սահմանված ժամկետում (բայց ոչ ուշ, քան բանկն անվճարունակ ճանաչվելու պահից հաշված վեցամսյա ժամկետը) ԿԲ-ի խորհրդին է ներկայացնում կարճ ժամանակահատվածում բանկի կողմից կապիտալի տեսքով ֆինանսական միջոցների ներգրավման, չաշխատող ակտիվների վերականգնման, ակտիվների և պարտավորությունների ամբողջական կամ մասնակի վաճառքի, բանկի գործունեության տեսակի փոփոխման հնարավորության (բանկի անվճարունակության դեպքում), ինչպես նաև ՀՀ բանկային և ֆինանսական համակարգերի վրա բանկի լուծարման հնարավոր ազդեցության մասին **եզրակացություն:**

**Գնահատման արդյունքների հիման վրա ադմինիստրացիայի ղեկավարը մշակում է անվճարունակ բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը և այն ներկայացնում է ԿԲ-ի խորհրդի հաստատմանը:**

Աղմինիստրացիայի ղեկավարը պատասխանատվություն է կրում աղմինիստրացիայի գործունեության համար: **Աղմինիստրացիայի ղեկավարը գործում է բանկի անունից՝ առանց լիազորագրի:**

**Աղմինիստրացիայի ղեկավար նշանակելու մասին ԿԲ-ի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից բանկի կառավարման մարմինների լիազորությունները կասեցվում են, իսկ գործադիր տնօրենի կամ նման պարտականություններ կատարող կառավարման այլ մարմնի լիազորությունները՝ դադարեցվում:**

Աղմինիստրացիայի գործունեության ընթացքում բանկի կառավարման մարմիններն իրավունք չունեն ընդունել որոշումներ: Բանկի կառավարման մարմիններն աղմինիստրացիայի նշանակման պահից պարտավոր են աղմինիստրացիայի հետ համաձայնեցված ժամկետներում աղմինիստրացիայի ղեկավարին հանձնել բանկի հաշվապահական և այլ փաստաթղթերը, բանկի նյութական և այլ արժեքները: Բանկի ղեկավարները և այլ աշխատակիցները պարտավոր են կատարել աղմինիստրացիայի ղեկավարի օրինական հանձնարարականները:

## **ԲԱՆԿԻ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ**

Աղմինիստրացիա նշանակելու դեպքում ԿԲ-ը՝ աղմինիստրացիայի ղեկավարի միջնորդությամբ կամ իր հաստատած ծրագրով, իրավունք ունի աղմինիստրացիայի գործողության ամբողջ (կամ անհրաժեշտության դեպքում՝ կարճ) ժամանակահատվածով **սառեցնել բանկի պարտատերերի պահանջների բավարարումը (մորատորիում):** Մորատորիումի գործողությունը տարածվում է դրամական պարտավորությունների և պարտադիր վճարումների, ներառյալ՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների վրա:

**Մորատորիումի գործողության ընթացքում՝**

- *կասեցվում է դրամական պարտավորությունների և պարտադիր վճարումների, ներառյալ՝ հարկերի գծով պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկման, վճարման կամ գանձման ենթակա տուժանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների, ինչպես նաև վճարման ենթակա տոկոսների հաշվարկումը, վճարումը կամ գանձումը,*
- *չի թույլատրվում կատարողական և այլ փաստաթղթերով սահմանված անվիճելի կարգով որևէ բռնագանձում կամ գանձում կամ արգելանքի կիրառում,*
- *կասեցվում է գույքային բռնագանձումներով կատարողական փաստաթղթերի կատարումը, եթե դրանց վերաբերյալ կայացված դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտել մինչև աղմինիստրացիայի նշանակումը:*

Բանկի պարտատերերի պահանջների սառեցման ժամկետի ավարտից հետո չեն հաշվարկվում, վճարվում, գանձվում կամ բռնագանձվում պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար օրենքներով կամ պայմանագրերով նախատեսված տուժանքները կամ ֆինանսական այլ պատժամիջոցները: Բանկի պարտատերերի պահանջների սառեցման ժամկետի ավարտից հետո դրամական պարտավորություններով կամ պարտադիր վճարումների գծով պարտավորությունների գումարի վրա ենթակա են հաշվեգրման միայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու հետ կապված տոկոսները, եթե դրանք չեն գերազանցում օրենքով կամ պայմանագրով սահմանված տոկոսների չափը: Տոկոսները հաշվարկվում են միայն բանկի պարտատերերի պահանջների սառեցման ժամկետից հետո ընկած ժամանակահատվածի համար: Նշված տոկոսները չեն հաշվեգրվում պարտավորության գումարի վրա հաշվեգրված տուժանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների, ինչպես նաև տոկոսների գումարների վրա:

**Մորատորիումի գործողությունը չի տարածվում՝**

- ✓ քաղաքացիների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հետևանքով առաջացած պահանջների,
- ✓ արձակման նպաստների և աշխատավարձերի (բացառությամբ բանկի հետ կապված անձանց) վճարման, հեղինակային պայմանագրերով պարգևատրումների հետ կապված քաղաքացիների պահանջների,
- ✓ բանկի բնականոն գործունեության համար անհրաժեշտ ընթացիկ ծախսերի վճարման գծով պահանջների վրա,
- ✓ ֆինանսական գործարքներից և ապահովության պայմանագրերից բխող գուտացման վրա:

Բանկի պարտատերերի պահանջների բավարարման մորատորիումը վերացվում է (ապաստեցում) ԿԲ-ի խորհրդի որոշմամբ:

## ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Բանկի ֆինանսական առողջացման ծրագիրն ադմինիստրացիայի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

Բանկի ֆինանսական առողջացման միջոցառումների ծրագիրը պարտադիր կարգով պետք է պարունակի՝

- բանկի ֆինանսական վիճակի գնահատականը,
- բանկի մասնակիցների (բաժնետերերի, փայտերերի) և այլ անձանց մասնակցության եղանակները բանկի ֆինանսական առողջացմանը,
- բանկի պահպանության ծախսերի կրճատմանն ուղղված միջոցառումները,
- լրացուցիչ եկամուտների ստացմանն ուղղված միջոցառումները,
- տարաժամկետով և վարկերի և դեբիտորական պարտքերի վերադարձմանն ուղղված միջոցառումները,
- բանկի կազմակերպական կառուցվածքի փոփոխությանն ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները,
- ընթացիկ իրացվելիության և հիմնական կապիտալի բավարար մակարդակի, այլ տնտեսական նորմատիվների վերականգնման հետ կապված միջոցառումները,
- բանկի կանոնադրական կապիտալի նվազեցման և ավելացման դեպքերը, կարգը, պայմանները և ժամկետները:

Բանկի ֆինանսական առողջացման ծրագրում կարող են ներառվել հետևյալ միջոցառումները՝

- բանկի մասնակիցների (բաժնետերերի, փայտերերի) և այլ անձանց ֆինանսական օգնությունը կամ լրացուցիչ ներդրումները բանկի կանոնադրական կապիտալի ավելացման, վարկերի, փոխառությունների տրամադրման, ինչպես նաև պարտատոմսերի, այլ արժեթղթերի, ինչպես նաև ածանցյալ ֆինանսական գործիքների գնման ձևով,
- բանկի ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի փոփոխությունը, ինչպես նաև բանկի, որպես միասնական ամբողջության, կամ դրա մի մասի վաճառքը,
- բանկի կազմակերպական կառուցվածքի փոփոխությունը,
- բանկի վերակազմակերպումը,
- օրենքով չարգելված այլ միջոցառումներ:

Բանկի մասնակիցների և այլ անձանց ֆինանսական օգնությունը, լրացուցիչ ներդրումները կարող են իրականացվել հետևյալ ձևերով՝

- բանկում բանկային ավանդի (դեպոզիտի) ներդրում,
- երաշխիքի տրամադրում բանկի վարկային պարտավորությունների համար, վարկերի, փոխառությունների տրամադրում,
- վճարման հետաձգման տրամադրում,
- բանկի պարտքի փոխանցում՝ նրա պարտատերերի համաձայնությամբ,
- լրացուցիչ ներդրում բանկի կանոնադրական կապիտալում,
- բանկի պարտքի ներում և օրենքով չարգելված այլ ձևերով:

Բանկային հաշիվներում և ավանդներում առկա դրամական միջոցները, ԿԲ-ի համաձայնությամբ, բանկի պարտատիրոջ կողմից կարող են ուղղվել բանկի կանոնադրական կապիտալի մեծացմանը: Բանկին ցույց տրվող ֆինանսական օգնության ձևերի և պայմանների մասին որոշումներն ընդունվում են բանկի և ֆինանսական օգնություն ցույց տվող անձի կողմից: Այդ որոշումներն ադմինիստրացիայի ղեկավարը պարտավոր է նախապես համաձայնեցնել ԿԲ-ի հետ:

Բանկի ակտիվների կառուցվածքի փոփոխությունը կարող է նախատեսել՝

- վարկային պորտֆելի որակի բարելավում,
- ակտիվների կառուցվածքի փոփոխում ըստ ժամկետների՝ համապատասխանեցնելով դրանք համապատասխան պարտավորությունների կատարումն ապահովող ժամկետների հետ,

- *բանկի ծախսերի, այդ թվում՝ պարտքերի սպասարկման և նրա կառավարման գծով իրականացվող ծախսերի կրճատում,*
- *շահույթ չբերող ակտիվների, ինչպես նաև այն ակտիվների վաճառք, որոնց օտարումը չի խոչընդոտում բանկի կողմից բանկային գործառնությունների պատշաճ իրականացմանը,*
- *ակտիվների կառուցվածքի այլ բնույթի փոփոխություններ:*

**Բանկի պարտավորությունների կառուցվածքի փոփոխությունը կարող է նախատեսել՝**

- *ընդհանուր և (կամ) կանոնադրական կապիտալի չափի մեծացում,*
- *պարտավորությունների ընդհանուր կառուցվածքում ցլպահանջ և կարճաժամկետ պարտավորությունների տեսակարար կշռի կամ չափի իջեցում,*
- *պարտավորությունների ընդհանուր կառուցվածքում երկարաժամկետ և միջին ժամկետայնության պարտավորությունների տեսակարար կշռի մեծացում,*
- *պարտավորությունների կառուցվածքի այլ բնույթի փոփոխություններ:*

**Բանկի կազմակերպական կառուցվածքի փոփոխությունը կարող է իրականացվել՝**

- ✓ *բանկի աշխատակիցների թվաքանակի և կազմի փոփոխությամբ,*
- ✓ *բանկի կառուցվածքի փոփոխությամբ,*
- ✓ *տարածքային կամ կառուցվածքային ստորաբաժանումների լուծարմամբ,*
- ✓ *այլ միջոցներով, որոնք կարող են նպաստել բանկի ֆինանսական առողջացմանը:*

**Բանկի վերակազմակերպումն** իրականացվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Բանկի ֆինանսական առողջացման ծրագրով կարող է նախատեսվել բանկի կազմակերպական-իրավական ձևի փոփոխություն, որն իրականացվում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Բանկի ֆինանսական առողջացման միջոցառումների ծրագրի ձևը, դրանում ներառվող պարտադիր այլ դրույթները սահմանում է ԿԲ-ը: Բանկի ֆինանսական առողջացման միջոցառումների ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ԿԲ-ը՝ իր սահմանած կարգով:

Բանկի ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման պահից բանկը դուրս է գալիս «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված տնտեսական նորմատիվների կարգավորման դաշտից: ԿԲ-ը կարող է անվճարունակ բանկի համար սահմանել հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվների այլ սահմանաչափեր, հաշվարկման կարգ և հաշվարկում ընդգրկվող տարրերի կազմ:

**ԲԱՆԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

**Բանկը կարող է վերակազմակերպվել՝**

- ❖ **բանկի՝ մեկ այլ բանկի հետ միացման և**
- ❖ **բանկի վերակազմավորման միջոցով:**

**Բանկի վերակազմավորումը** (կազմակերպական-իրավական ձևի փոփոխությունը) կատարվում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

**Բանկի կամ մի քանի բանկերի՝ մեկ այլ բանկի միանալու դեպքում** միացող բանկերը կնքում են միացման պայմանագիր՝ ստանալով ԿԲ-ի նախնական հավանությունը: Միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնություն ստանալու համար բանկը ԿԲ-ի սահմանած ձևով, կարգով և ժամկետներում ԿԲ է ներկայացնում գործարքի էական պայմանները, անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները:

ԿԲ-ի խորհուրդը համապատասխան գործարքի էական պայմանները, անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկություններն ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում, կայացնում է նախնական հավանություն տալու կամ չտալու մասին որոշում: Սահմանված ժամկետում որևէ որոշում չկայացվելու դեպքում հավանություն տալու մասին ԿԲ-ի խորհրդի որոշումը համարվում է ընդունված:

ԿԲ-ի խորհուրդը կարող է հավանություն չտալ միացման պայմանագրի կնքմանը, եթե՝

- բանկի (բանկերի) վերակազմակերպումը կամ ներկայացված փաստաթղթերը հակասում են ՀՀ օրենսդրությանը, պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել պատշաճ կարգով և ձևով կամ ներկայացվել են թերի,
- միացման արդյունքում պահպանվող բանկի ֆինանսական վիճակն էականորեն կվտանգվի,
- միացման արդյունքում բանկը բանկային շուկայում ձեռք կբերի գերիշխող կամ մենաշնորհի դիրք,

- գործարքի արդյունքում կողմերից որևէ մեկի ավանդատուների, այլ պարտատերերի շահերը կվտանգվեն:

ԿԲ-ի նախնական հավանությունն ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում, միացող բանկերը միջնորդագրին կից ԿԲ-ի խորհրդի հաստատմանն են ներկայացնում միացման պայմանագիրը և ԿԲ-ի սահմանած այլ փաստաթղթեր: ԿԲ-ի խորհուրդը հաստատում և գրանցում է միացման պայմանագիրն այն ստանալու պահից՝ երկշաբաթյա ժամկետում, եթե պայմանագիրը համապատասխանում է ստացված նախնական հավանության պայմաններին:

Միացման պայմանագրում սահմանված ժամկետներում միացման մասին որոշում ընդունած բանկերն իրականացնում են միացման պայմանագրով նախատեսված միջոցառումները, հաստատում են փոխանցման ակտը և պահպանվող բանկի կանոնադրության կամ կանոնադրության լրացումների և փոփոխությունների հետ միասին ներկայացնում են ԿԲ՝ գրանցման:

## **ԲԱՆԿԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

**Բանկի լուծարումը** գործընթաց է, որի արդյունքում բանկը դադարեցնում է իր գոյությունը որպես իրավաբանական անձ: *Բանկի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ բանկի անցնելու:*

Ընդունված է տարբերակել՝

- **բանկի կամավոր լուծարումը**, որն իրականացվում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի որոշման հիման վրա,
- **հարկադրական լուծարումը**, որը նախաձեռնվում է կենտրոնական բանկի կամ դատարանի կողմից, օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակվում է լուծարային կառավարիչ կամ լուծարային հանձնաժողով, որը վաճառում է բանկի ակտիվները և ստացված հասույթով կատարում պարտականությունները:

ԿԲ-ի դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո դատարանը քննում է գործը եռօրյա ժամկետում: Դատարանը որոշում է կայացնում ԿԲ-ի դիմումը բավարարելու կամ մերժելու մասին: Դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ: Դատարանը մերժում է ԿԲ-ի դիմումը, եթե ԿԲ-ը որոշում է կայացրել սահմանված ընթացակարգի խախտումներով:

**Բանկը լուծարվում է՝**

- ❖ լիցենզիան անվավեր ճանաչելու դեպքում,
- ❖ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում,
- ❖ «Բանկերի, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում,
- ❖ ընդհանուր ժողովի որոշմամբ:

Բանկի սնանկության մասին որոշում կայացնելիս դատարանը նշանակում է նաև լուծարային կառավարիչ՝ ԿԲ-ի կամ պարտատերերի կողմից ներկայացված թեկնածուների թվից:

Դատարանի կողմից ԿԲ-ի դիմումը բավարարելու և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշման կայացման պահից՝

- լուծարային կառավարչին են անցնում բանկի գործերի կառավարման լիազորությունները,
- դադարեցվում են բանկի բոլոր տեսակի պարտավորությունների դիմաց տոկոսների և այլ նմանատիպ հատուցումների, օրենքով կամ պայմանագրով նախատեսված բոլոր տեսակի տուժանքների, տուգանքների, տույժերի, տոկոսների հաշվարկումը և գանձումը, վարձակալական և այլ վճարների, բոլոր տեսակի հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների հաշվարկումն ու գանձումը,
- սառեցվում են բանկի բոլոր, այդ թվում՝ ոչ ռեզիդենտ բանկերում գտնվող հաշիվները և թույլատրվում են միայն բանկին կատարվող վճարումները,
- դատարաններում կարճվում են բոլոր այն գործերի վարույթները, որտեղ բանկը ճանաչվել է պատասխանող, ինչպես նաև կասեցվում են բանկի գույքի վրա բռնագանձում տարածելու մասին

դատարանների, արբիտրաժային տրիբունալների վճիռների, որոշումների կատարողական վարույթները: Կասեցված կամ կարճված վարույթների հետ կապված պահանջները պարտատերերը կարող են ներկայացնել լուծարային կառավարչին,

- լուծարային կառավարչի դիմումի հիման վրա ԿԲ-ը դիմումն ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում, լուծարվող բանկի ֆիրմային անվանման մեջ կատարում է փոփոխություն՝ ներառելով «լուծարվող բանկ» բառերը:

Իսկ ԿԲ-ի դիմումը մերժելու մասին դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ տասնօրյա ժամկետում, ԿԲ-ը վերականգնում է բանկի բանկային գործունեության լիցենզիան, վերականգնվում են բանկի բոլոր կառավարման մարմինների, ղեկավարների՝ մինչև այդ կասեցված կամ դադարեցված լիազորությունները, բացառությամբ գործադիր տնօրենի կամ նման պարտականություններ կատարող կառավարման այլ մարմնի, որի լիազորությունները չեն վերականգնվում:

**Պատարանի կողմից սնանկ ճանաչված բանկի լուծարման ընթացակարգն** սկսում է դատարանը:

Բանկի կառավարման մարմինները, իսկ սահմանված կարգով ադմինիստրացիա նշանակված լինելու դեպքում՝ ադմինիստրացիայի ղեկավարը, պարտավոր է դատարանի կողմից բանկի սնանկության և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշման կայացման պահից՝ 15-օրյա ժամկետում, լուծարային կառավարչին հանձնել բանկի փաստաթղթերը, նյութական և այլ արժեքները:

**Լուծարային կառավարիչն** իր նշանակումից հետո՝ եռօրյա ժամկետում, մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակում է պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի և վայրի մասին տեղեկություններ: Պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից և գերազանցել վեցամսյա ժամկետը:

Լուծարային կառավարիչը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ընթացքում ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ բանկին ի պահ հանձնված գույքը դրա սեփականատերերին վերադարձնելու և այդ կապակցությամբ վերջնական հաշվարկներ կատարելու ուղղությամբ: Լուծարային կառավարիչը ծանուցումներ է ուղարկում գույքի սեփականատերերին՝ նշելով ժամկետը, որի ընթացքում նրանք կարող են պահանջել այդ գույքը: Նշված ժամկետը չի կարող լինել մեկ ամսից ավելի: Լուծարային կառավարչի ծանուցումն ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում, գույքի սեփականատերերը պարտավոր են վերցնել բանկին ի պահ հանձնված գույքը: Եթե սույն կետով սահմանված մեկամսյա ժամկետում գույքի սեփականատերերը չեն դիմում բանկ, ապա լուծարային կառավարիչը գույքը հանձնում է ի պահ՝ օրենքով սահմանված կարգով կնքելով պայմանագիր:

Լուծարային կառավարիչը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ընթացքում, ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ բանկի պարտատերերին հայտնաբերելու և բանկի դեբիտորական պարտքերն ստանալու ուղղությամբ: Լուծարային կառավարիչը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, կազմում, հաստատում և առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում հրապարակում է միջանկյալ **լուծարային հաշվեկշիռը**, որը պարունակում է տեղեկություններ՝

- լուծարվող բանկի գույքի կազմի մասին,
- պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի մասին, այդ թվում՝ բանկի հաշվեկշռում արտացոլված կամ բանկին ներկայացված պահանջների ընդհանուր գումարը, յուրաքանչյուր ավանդատուին, վարկատուին կամ այլ պարտատիրոջը հասանելիք գումարի չափը և պահանջների բավարարման հերթականությունը, ինչպես նաև իր կողմից մերժված պահանջների առանձին ցանկը,
- այդ պահանջների քննարկման արդյունքների մասին,
- Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ տեղեկություններ:

Լուծարային կառավարիչը պարտատերերի պահանջները բավարարում է սահմանված հերթականությամբ, միջանկյալ լուծարային հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հրապարակման օրվանից:

## ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ:



Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ:

**Ապահովագրության պայմանագրերից բխող պահանջները բավարարվում են** ապահովագրական (վերաապահովագրական) ընկերության տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվներից՝ **արտահերթ**՝ հետևյալ հերթականությամբ.

- առաջին՝ պարտադիր ապահովագրության պայմանագրերից բխող անձի կյանքին ու առողջությանը պատճառված վնասից առաջացած պահանջները,
- երկրորդ՝ պարտադիր ապահովագրության պայմանագրերից բխող այլ պահանջներ,
- երրորդ՝ կամավոր ապահովագրության պայմանագրերից բխող անձի կյանքին ու առողջությանը պատճառված վնասից առաջացած պահանջները,
- չորրորդ՝ կամավոր ապահովագրության պայմանագրից բխող այլ պահանջներ,
- հինգերորդ՝ վերաապահովագրության ընդունած (ստանձնած) ռիսկերի գծով վերաապահովագրության պայմանագրերից բխող անձի կյանքին ու առողջությանը պատճառված վնասից առաջացած պահանջները,
- վեցերորդ՝ վերաապահովագրության ընդունած (ստանձնած) ռիսկերի գծով վերաապահովագրության պայմանագրերից բխող այլ պահանջներ,
- առաջինից վեցերորդ հերթերում չընդգրկված ապահովագրության պայմանագրերից բխող այլ պահանջներ:

Եթե ապահովագրության պայմանագրերից բխող պահանջների արժեքը գերազանցում է Ընկերության տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների մեծությունը, ապա գերազանցող մասը բավարարվում է սույն հոդվածով՝ ապահովագրության պայմանագրերից բխող համապատասխան պահանջների բավարարման համար նախատեսված հերթում: Եթե տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների մեծությունն է գերազանցում պահանջների արժեքը, ապա գերազանցող մասն ընդգրկվում է լուծարային միջոցների կազմում և օգտագործվում է օրենքով սահմանված կարգով:

**Բանկի պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին, հետևյալ հերթականությամբ՝**

- ✓ առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ԿԲ-ի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում,
- ✓ երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի,
- ✓ երրորդ՝ ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժույթային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ,
- ✓ չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների,
- ✓ հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները,
- ✓ վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները,
- ✓ յոթերորդ՝ բանկի մասնակիցների պահանջները:

Միևնույն հերթի պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ:

Միևնույն հերթի պարտատերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի բոլոր պահանջները լրիվ բավարարելուց հետո:

Եթե լուծարային միջոցները չեն բավարարում որևէ հերթի բոլոր պարտատերերի պահանջներն ամբողջությամբ, ապա դրանք բավարարվում են համամասնորեն կամ պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է՝ հիմք ընդունելով պարտավորությունների չափի մեծությունը՝ փոքրից

դեպի ավելի մեծ առաջնահերթությամբ: Պարտավորությունների բավարարման սկզբունքը հաստատում է դատարանը ԿԲ-ի միջնորդությամբ՝ միջնորդությունը ստանալու պահից 5-օրյա ժամկետում՝ հաշվի առնելով այն, թե որ սկզբունքի կիրառման դեպքում հնարավոր կլինի բավարարել առավել մեծ քանակությամբ պարտատերերի պահանջները: Դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Լուծարային կառավարչի կողմից պարտատիրոջ պահանջները մերժելու կամ դրանք քննարկելուց խուսափելու դեպքում մինչև բանկի լուծարման հաշվեկշռի հաստատումը պարտատերն իրավունք ունի բողոքարկել լուծարային կառավարչի գործողությունները: Նախատեսված հայցադիմումը դատարանը քննում է եռօրյա ժամկետում: Դատարանի վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Եթե պահանջ ներկայացրած և լուծարային կառավարչի կողմից հաշվառված պարտատերը մինչև տվյալ հերթի պահանջների բավարարման համար լուծարային կառավարչի կողմից մամուլով կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հայտարարված ժամկետի վերջին օրը չի ներկայանում իր պահանջն ստանալու համար, ապա նման պարտատիրոջը հատկացվելիք միջոցները կամ գույքն օրենքով սահմանված կարգով հանձնվում են նոտարի դեպոզիտ կամ տրամադրվում այլ բանկի՝ ի պահ:

Յուրաքանչյուր հերթի պահանջի բավարարումն սկսելուց առաջ լուծարային կառավարիչը մամուլով և (կամ) զանգվածային լրատվության այլ միջոցներով հայտնում է տվյալ հերթի պահանջների բավարարման վայրի, կարգի և ժամկետների մասին տեղեկատվություն: Պահանջների բավարարման վայրին, կարգին և ժամկետներին վերաբերող հիմնական տեղեկությունները, ինչպես նաև դրանց փոփոխություններն իրավաբանական ուժ են ստանում մամուլով և (կամ) զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից:

Սահմանված հերթերից որևէ մեկի բավարարման ընթացքում, եթե պարզվում է, որ բանկն այլևս ակտիվ չունի կամ հնարավոր չէ այլ կերպ բավարարել բանկի պարտատերերի պահանջները, լուծարային կառավարիչը կազմում է լուծարման հաշվեկշիռ և այն հաստատելու դիմումով ներկայացնում է դատարան: Դատարանի կողմից լուծարային հաշվեկշռի հաստատումից հետո պարտատերերի հետ հաշվարկները համարվում են ավարտված:

**Բանկի լուծարային միջոցների մեջ ընդգրկվում են սեփականության իրավունքով բանկին պատկանող գույքը, ներառյալ՝ միջոցները, պահանջի իրավունքները, գրավի առարկա համարվող գույքը՝ պայմանագրով նախատեսված բանկի պարտավորության դրամական արժեքը գերազանցող մասով, լուծարային կառավարչի հայցով դատարանի կողմից գործարքի անվավեր ճանաչման հետևանքով բանկին վերադարձված միջոցները, բանկի մասնակիցների (բաժնետերերի, փայտտերերի) և ղեկավարների միջոցները, այլ միջոցները:** Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատում է լուծարվող բանկի այն գույքի ցանկը, որը պետք է իրացվի հրապարակային սակարկությունների միջոցով:

Դատարանի կողմից բանկի սնանկության և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշման կայացման պահից՝ եռօրյա ժամկետում, լուծարային կառավարիչը ՀՀ տարածքում գործող բանկերից մեկում բացում է բանկի **լուծարային հաշիվ**, որի վրա հաշվեգրվում են բանկի բոլոր դրամական միջոցները, ինչպես նաև բանկի լուծարային միջոցների իրացումից ստացված գումարները: Լուծարման ընթացակարգում գտնվող բանկը, բացի լուծարային հաշվից, այլ հաշիվներ չի կարող ունենալ:

## ԲԱՆԿԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնելու բանկի լուծարման մասին, եթե բանկն ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ չունի պարտավորություններ:

Ընդհանուր ժողովի որոշմամբ բանկի լուծարման նպատակով ընդհանուր ժողովի կողմից լուծարման նախնական համաձայնություն ստանալու համար ԿԲ-ին դիմելու մասին որոշման հիման վրա բանկը ԿԲ է ներկայացնում բանկի լուծարման նախնական համաձայնություն ստանալու հայտ՝ դրան կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր:

ԿԲ-ի խորհուրդը քննարկում է հայտը եռամսյա ժամկետում և իրավունք ունի մերժելու այն, եթե ԿԲ-ի խորհրդի հիմնավոր կարծիքով լուծարումը կարող է հանգեցնել ՀՀ բանկային համակարգի

ապակայունացմանը: Այս դեպքում ԿԲ-ի խորհուրդը կարող է երկարաձգել բանկի գործունեությունը մինչև երկու տարի ժամկետով:

ԿԲ-ի կողմից բանկին լուծարման նախնական համաձայնություն տալու դեպքում բանկը կարող է միջոցներ ձեռնարկել ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ բանկի պարտավորությունների դադարեցման, ներառյալ՝ այլ անձանց փոխանցման ուղղությամբ: Նշված պարտավորությունները դադարեցնելուց հետո միայն ընդհանուր ժողովը կարող է լուծարման մասին որոշում ընդունել: Այդ որոշման ընդունումից հետո բանկն անմիջապես ԿԲ է ներկայացնում լուծարման թույլտվություն ստանալու հայտ՝ դրան կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր:

ԿԲ-ի խորհուրդն իրավունք ունի մերժելու լուծարման թույլտվություն ստանալու հայտը, եթե առկա են ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ բանկի պարտավորություններ կամ բանկն ի վիճակի չէ բավարարելու իր պարտատերերի պահանջները:

**ԿԲ-ը լուծարման թույլտվություն տալու դեպքում ընդունում է նաև բանկի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում:** Ընդհանուր ժողովի որոշմամբ լուծարվող բանկերի թղթակցային հաշիվների վարման և փակման կարգը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

### ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Բանկի լուծարային հանձնաժողովն ստեղծվում է դատարանի կամ ԿԲ-ի խորհրդի համապատասխան որոշումը կայացնելու պահից՝ առնվազն հնգօրյա ժամկետում, բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ բանկը լուծարելու, նրա գույքը (միջոցները) վաճառելու և պարտատերերի օրինական պահանջները բավարարելու նպատակով: Այն կազմվում է *առնվազն երեք անդամից*: Լուծարային հանձնաժողովի նախագահ և անդամ կարող են լինել միայն ԿԲ-ի կողմից համապատասխան որակավորում ստացած անձինք: Մինչև լուծարային հանձնաժողովի ձևավորումը լուծարային հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է տվյալ բանկի գործադիր տնօրենը կամ կառավարման նման լիազորություններ իրականացնող անձը, եթե բանկի կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում լուծարվող բանկի կառավարման լիազորությունները: Լուծարային հանձնաժողով ստեղծելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, լուծարային հանձնաժողովը հայտարարություն է տալիս մամուլում և ծանուցում է ԿԲ-ին բանկի լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին, որը չի կարող պակաս լինել երկու ամսից: Լուծարային հանձնաժողով չստեղծվելու դեպքում բանկի լուծարային հանձնաժողովն ստեղծվում է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

Բանկի կառավարման մարմինները պարտավոր են լուծարային հանձնաժողով ձևավորելու մասին որոշման կայացումից հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովին հանձնել բանկի փաստաթղթերը, նյութական և այլ արժեքներ: Լուծարային հանձնաժողով նշանակելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովի նախագահը դիմում է ԿԲ՝ լուծարվող բանկի ֆիրմային անվանման մեջ ներառելու «լուծարվող բանկ» բառերը: ԿԲ-ը դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարվող բանկի ֆիրմային անվանման մեջ կատարում է փոփոխություն՝ ներառելով «լուծարվող բանկ» բառերը:

#### **Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ընթացքում՝**

- ❖ ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ բանկին ի պահ հանձնված գույքը դրա սեփականատերերին վերադարձնելու և այդ կապակցությամբ վերջնական հաշվարկներ կատարելու ուղղությամբ: Լուծարային հանձնաժողովը ծանուցումներ է ուղարկում գույքի սեփականատերերին: Լուծարային հանձնաժողովի ծանուցումն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, գույքի սեփականատերերը պարտավոր են վերցնել բանկին ի պահ հանձնված գույքը: Եթե սույն մասով սահմանված մեկամսյա ժամկետում գույքի սեփականատերերը չեն դիմում բանկ, ապա լուծարային հանձնաժողովը գույքը հանձնում է ի պահ,
- ❖ հաշվեգրում և գնահատում է լուծարվող բանկի ակտիվներն ու պասիվները,

- ❖ ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ բանկի պարտատերերին հայտնաբերելու և բանկի դեբիտորական պարտքերն ստանալու, լուծարվող բանկի կողմից տրված վարկերը ժամկետից շուտ վերադարձնելու ուղղությամբ,
- ❖ միջոցներ է ձեռնարկում լուծարվող բանկի ակտիվներն առավել շահավետ իրացնելու համար,
- ❖ միջոցներ է ձեռնարկում լուծարվող բանկի նկատմամբ առկա պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ,
- ❖ որոշում է բանկի պարտավորությունների կատարումից հետո մնացած միջոցները մասնակիցների միջև բաշխելու կարգը:

Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, կազմում, հաստատում և առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում հրապարակում է **միջանկյալ լուծարային հաշվեկշիռը**, որը պարունակում է տեղեկություններ՝

- լուծարվող բանկի գույքի կազմի մասին,
- պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի մասին, այդ թվում՝ բանկի հաշվեկշռում արտացոլված կամ բանկին ներկայացված պահանջների ընդհանուր գումարը, յուրաքանչյուր ավանդատուին, վարկատուին կամ այլ պարտատիրոջը հասանելիք գումարի չափը և պահանջների բավարարման հերթականությունը, ինչպես նաև իր կողմից մերժված պահանջների առանձին ցանկը,
- այդ պահանջների քննարկման արդյունքների մասին,
- Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ տեղեկություններ:

Լուծարային հանձնաժողովը պարտավոր է ԿԲ-ի սահմանած կարգով, ձևով, հաճախականությամբ և ժամկետներում հաշվետվություններ ներկայացնել ԿԲ: Լուծարային հանձնաժողովը պարտավոր է ԿԲ-ի սահմանած կարգով, ցանկով և ձևով իր գործունեության վերաբերյալ պարբերաբար, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ, տեղեկություններ հրապարակել մամուլում: ԿԲ-ն իրավունք ունի լուծարային հանձնաժողովից պահանջելու ցանկացած տեղեկություն նրա գործունեության վերաբերյալ:

**Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռը**, որը լուծարվող բանկի ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը ներկայացնում է ԿԲ: ԿԲ-ը տասնօրյա ժամկետում կայացնում է լուծարման հաշվեկշիռը հաստատելու կամ հաստատումը մերժելու մասին որոշում՝ նշելով մերժման հիմքերը: Կենտրոնական բանկը մերժում է լուծարման հաշվեկշռի հաստատումը, եթե լուծարային հանձնաժողովը խախտել է սույն օրենքի պահանջները:

ԿԲ-ի կողմից լուծարման հաշվեկշիռը չհաստատելու դեպքում լուծարային հանձնաժողովը տասնօրյա ժամկետում վերացնում է ԿԲ-ի կողմից լուծարման հաշվեկշռի հաստատումը մերժելու հիմքերը և լուծարման հաշվեկշիռը լուծարվող բանկի ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո այն հաստատելու մասին նոր դիմում է ներկայացնում ԿԲ:

ԿԲ-ի կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ԿԲ-ը լուծարվող բանկը գրանցումից հանելու մասին գրառում է կատարում բանկերի գրանցումների մատյանում, որից հետո բանկը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած: ԿԲ-ը այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին: ԿԲ-ի կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը բանկի լուծարման վերաբերյալ ԿԲ-ի կողմից սահմանված ձևով տեղեկանք է հրապարակում, որից հետո լուծարային հանձնաժողովն ազատվում է բանկի լուծարման հետ կապված պարտավորություններից: